

ԾԱՂԻԿ ԿԵ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՄ ԵՐԵՐԸ — Հո-
տը 40 փարա:

Բաժանորդագրին կԱՆԻՆԻԿ — Պոլսոյ համար տարե-
կան 45 դրշ. վեցամսեայ 23 դրշ. եռամսեայ 12 դրշ. —
Գաւառաց համար տարեկան 30 դրշ. վեցամսեայ 26
դրշ. եռամսեայ 14 դրշ.:

Ռուսիոյ համար տարեկան հինգ րուբլի: Ուրիշ եր-
կիրներու համար 12 ֆրանք:

Գաւառներէն դուրսմտողք ինքնաշարժի:
Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի. այնուհետեւ
բաժանորդագրին չը վճարողը կը դադրի թերթ ընդ ու-
նելէ:

Ծանուցման տողը 2 դրշ.:

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԾԱՂԻԿ ԿԵ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՇԱՐՈՒՄ ԵՐԵՐԸ Է
ԳԻՄԵԼ,
Առ ՏՅՈՒՆԳ-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ
Պոլիս, Էսկի-Չաբիթէ, Պէրդերեան Տպարան
درعليه اسكى ضبطه زقاعنده بربريان مطبعه سنده
بالا قاشيان حووان

HOVNAN PALACACHIAN

Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻԻ 14

ՇԱՐԱԹ

15 ԳԵԿՏԵՄԲԵՐ 1890

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Պարբերաբար Արեւելիքի առաջին էջին մէջ
կը տեսնուին խմբագրական յօդուածներ ազ-
գային կրթութեան վրայ, ինչպէս անցեալ օր
ալ հրատարակուած էր յօդուած մը « Գործ
կայ, գործող չկայ » վերնագրոյն տակ: Այս խմբ-
ագրականքը ընդհանրապէս կծու քննադա-
տութիւնք են ազգային, անշուշտ հանրային
ու մասնաւոր, վարժարանաց ուղղութեան
դէմ զօր հեղինակն այդ յօդուածոց չի գտներ
բաւական գործնական, բաւական դրական,
բաւական կարող ուսանողին հացն ապահովե-
լու: Հեղինակը կը կարծէ թէ մեր վարժա-
րանաց մէջ աւանդուած կրթութիւնը առա-
ւել կամ նուազ գրական է, և այդ գրական
կրթութիւնը կը համարի յարմարագոյնն հով-
կուէնքու և անօթիներու թիւը չափցնելու:
Անգամ մը գրած էր թէ հայերէնի ուսումն
զարդ մ'է լոկ և առ առաւելն անոնց միայն
պիտանի որք կամ եկեղեցական կամ վարժա-
պետ լինելու սահմանուած են՝ չկրնալով ա-
ռաւել ինչ լինել: Այս անգամ ալ գառն բո-
ղոք մը կը բառնայ. ի զուր կը վստահին,
կ'ըսէ, մեր Պոլսոյ վարժարանաց համար ամէն
ամիս հազարաւոր ոսկիներ. չըջանաւարտը
անգործ կը մնան, քանզի կանոնաւորապէս
չեն ուսած ո՛չ վաճառատան տուժար մը բրո-
նել և ո՛չ առեւտրական նամակ մը գրել գա-
ղիբէն: Պատճառ. — վստահ զի գրական
ուսմունք, առաւել հրապուրիչ աշակերտին
համար, կը գրաւեն անոր ուշն ու ժամանակն
և կ'արգելուն զնա զբաղել թիւերով և ա-
ռեւտրական լեզուի յատուկ տարապնեղով:
Իր եզրակացութիւնն է անշուշտ վտարել
գալութիւնքը մեր դպրոցներէ և տեղը դը-
նել միայն և միայն թուաբանութիւնը, տո-
մարակալութիւնը, վաճառականական թղթակ-
ցութիւնը, որպէս զի ուսանողն ի վերջ իւր
ընթացիք՝ բախտն ունենայ յաջողութեամբ
ողջունելու վաճառականի մը գրասենեկին
դուռը զոր անտարակոյս նորա համար էլ տո-
րատոյի մը մուտքը կը համարի: Այն ատեն,
ըստ Պատ. Յօդուածագրին, մեր վարժարանք
կը դադրին ամուլ վիճակ մ'ունենալէ և կ'ար-
տադրեն սերունդ մը ճշմարտապէս օգտակար
և կարող:

Գոհ եմք որ նոյն իսկ Արեւելիքի մէջ Գ. Զոհ-
րապէս Կիլիսիոյ գաղութի աղաղակ մ'արձակեց
այս չափազանց անձուկ տեսութեանց դէմ:
« Ո՛չ, դպրոց չեն երթար տղաք, կը գոչէ,
որպէս զի ստակ չահելու ճամբան սովորն. »
ո՛չ, այդ շահամուլ ոգին չպիտի առաջնորդէ
երբէք Հայ մանկուոյն. տղան պիտի երթայ
հոն նախ, նախ մարդու ու քաղաքացոյ գի-
տելիքը սովորելու: Եւ պայծառ ու ողջա-
գատ մտքով և ազնիւ զգացումով մը կը ճշգ-
կրթութեան նպատակը և կը պահանջէ որ

չչիթութիւնն այն ո՛ր և է բանի հետ որ չէ այն:
« Ուսումը, կ'ըսէ, կը սովորուի բարոյական և
մտաւորական զարգացման համար, և ո՛չ դը-
րամ շահելու », և կը յարէ. « Դաստիարա-
կութիւնը ու կրթութիւնն արհեստի հետ
պէտք չէ չիթել. մին կրնայ ծառայել միւ-
սին, բայց նպատակները տարբեր, բոլորովին
տարբեր պիտի մնան »:

Կրթական խնդրոց վիճաբանութեան մէջ
անտարակոյս հիմնական կէտն է որոշել կրթ-
ութեան բուն նպատակը. ցորչափ լաւ չըմ-
բռնեմք զայս, միշտ պիտի մտորեմք մեր դա-
տաստանաց մէջ և պիտի մտորեցնեմք հաս-
րակաց դատաստանն ալ զոր ուղղել և լուսա-
ւորել է հրապարակագրին պաշտօնը: Այդ
նպատակն, որպէս քաջ կը սահմանէ Գ. Զոհ-
րապէս Կիլիսիոյ, անտարակոյս բարի մարդ ու
բարի քաղաքացի պատրաստելն է, կամ, ա-
ւելի համառօտ ըսելով, բուն մարդեր պատ-
րաստելն է: Այլն ամենայն երկրորդական է
դաստիարակութեան մէջ:

Երբ դպրոցներն կատարեալ մարդ ընեն մեր
աղայքը, ալ նոքա կարող են իրենց կեանքը
պահպանելու և զարգացնելու միջոցները գտ-
նել և իւրացնել անջան: Այս ուղղութեամբ,
այս տեսակէտով պարտիմք քննել մեր դաս-
տիարակութեան վիճակը, հետադուտն նորա
թերութիւնները: Մարդն ունի բարոյական,
մտաւորական ու ֆիզիքական կարողութիւն-
ներ. դաստիարակութեան նպատակը պէտք
է լինի զարգացնել այս կարողութիւնքն ներ-
դաշնակ կերպով, կարող ընել զմարդկային
էական ուղիղ խորհելու, լաւն ու ազնիւը օր-
րելու, բարին գործելու: Ամէն իմաստասէրք
և մեծ մանկավարժք համամիտ են մեզ և
միշտ շատ աւելի բարձր գրած են դաստիա-
րակութեան նպատակը քան Արեւելիքի կարի
գրական խմբագիրը: Արդարեւ ամէն բան չի
կրնար վերածուիլ պատառ մը հաց ուտել
կարենալու այս աշխարհի վրայ. մարդն ա-
նասուն մը չէ որ նորա համար բաւական ըլ-
լայ կտոր մը խտոր կամ կտոր մ'ոսկորը: Ո՛չ
կուշտը բոլորովին երջանիկ է և ո՛չ ռօթին
հարկաւորապէս թշուառ: Մարդն այնպիսի
էակ է որ կարող է կամաւ ինքզինք ռօթու-
թեան դատապարտել, և կեանքն իսկ եթէ
ուզէ՝ կրնայ վերցնել իրմէ: Կեանքը բարո-
յական նպատակ մ'ունի մասնաւոր, և այն
կրթութիւնն որ չի տար մանկան այդ նպա-
տակին ձգտելու կարողութիւն կամ չի զար-
գացներ բնութենէն նորա մէջ դրուած կա-
րողութիւնքն յայն ձգտելու համար, իւր նը-
պատակէն վրիպեալ կրթութիւն մ'է: Հեր-
պերդ Սթենտէր իսկ, գրականասէր փիլիսոփայ,
կ'ըսէ. « Ի՞նչպէս ապրիլ կատարեալ կեան-
քով...: Ահա՛ ինչ որ ամէն բանէ վեր կարե-
ւոր է մեզ գիտնալ, և ինչ որ դաստիարա-
կութիւն պարտի ուսուցնել մեզ: Դաստիարա-
կութեան նպատակն է պատրաստել զմեզ ապ-

րելու կատարեալ կեանքով: » Կատարեալ
կեանքով ապրելու կը պատրաստեմք մեր
տղաքը, երբ մեր բոլոր կրթական ջանքերն ամ-
փոփեմք ուսուցանելու մէջ նոցա միայն ինչ որ
կը ներէ նոքա՝ ամիսը մի քանի հարիւր դա-
հեկան շահիլ, գրագրութիւն մը կամ արհեստ
մը, զի զուտ արհեստական կրթութիւնն ալ ոչ
նուազ պաշապաններ ունի մեր մէջ: Նոյն իսկ
վայելման տեսակէտով դատելով, մարդոյն
համար լոկ մարմնական անտառայն գոհաց-
ման մէջ չի կայանար վայելքը. նա՛ զգացում
ներովը, սրտովը կը վայելէ, նա իմացակա-
նութեամբ կը վայելէ մասնաւոր: Կրթու-
թիւն մը որ լոկ ապրուստի միջոց մը հայթայ-
թէ նմա, չապահովեր նորա երջանկութիւնը և
կը զրկէ զայն ընդհակառակն այնպիսի հա-
ճոյքներէ որք ամենէն աւելի կը վայելն մար-
դուն: Ամէն մարդու իր ձն է հասնիլ իւր բը-
նութեան բովանդակ զարգացման, ըլլալ բո-
լոր այն ինչ որ կը ներին իրեն ըլլալ իւր
ձիրքերն ու բնատուր կարողութիւնք: Դաս-
տիարակութիւնը պարտի նպատակը մէն մի
անհատի այդ վերելքի մէջ: « Դաստիարակու-
թիւնը պարտի ի լոյս բերել անհատին իտէ-
ալը », ըսած է Ժ. Ռիկոթէ: Երբ կարի
գետնաքարք ու սակաւապետ կրթութիւն մը
կ'արգելու անհատն զիմել իւր տեսլականին:
Կրնայ առարկուիլ թէ զարգացեալ կրթու-
թիւն մը միայն այն անձանց տրուելու է որք
սահմանեալ են բարձր պաշտօններ վարել:
Բայց ո՞վ սահմանեալ է բարձր պաշտօններ
վարել. նա՛ որ զարգացեալ կրթութիւն է
ստացեր. ուրեմն և ամէնէն յետին աղքատի
որդին երբ դաստիարակութիւնը դուրս կը
բերէ նորա մտքի և հոգւոյ գանձերը: Սա-
կայն ո՛չ ապաքէն ամէն մարդ ստեղծուած է
իրիւ մարդ ապրելու, այսինքն իրիւ բա-
րոյական էակ, անգամ ազգի ու մարդկային ընկե-
նեաց, անգամ ազգի ու մարդկային ընկե-
րութեան, ապա իւր երջանկութիւնը, զոր
պարտի ստեղծել, և այլոցն որում պարտի
ծառայել ի՞նչպիսի փոփոկ պարտաւորու-
թիւններ կը դնեն իւր վրայ զորս անշուշտ
չէ կարող քիչ մը թուաբանութեամբ արժա-
նապէս կատարել յաջողիլ: « Պարտի և պա-
հանջի » ծանօթութիւնը, ինչպէս սրամը-
տութեամբ կը հարցնէ Գ. Զոհրապէս Կիլիսիոյ,
պիտի կրնայ տալ ուսանողին միանգամայն և
մարդկային պարտուց և իրաւանց գիտակի-
ցութիւնը, որ հիմն է ամէն բարոյականութե-
ան և պայման պարկեշտ և օգտակար կե-
նաց:

Այս խնդիրք, զոր վեր ի վերջ կը շօշափեմ,
բաւական են ցոյց տալու թէ ո՛րքան կը սխա-
լի մէկը երբ կրթութեան խնդրոյն վրայ լոկ
հացի տեսակէտէ կը նայի, ինչպէս դժբախ-
տաբար ընելու կարի հակամէտ է մեր նիւ-
թապաշտ ժողովուրդը: Գէթ խմբագրութիւ-
նը չքաջալերէ՛ր այդ հակումներ որք ինքնին

արդէն չատ վայրագարչ են: Եթէ մեր ազգային վարժարանաց համար ընդհանրապէս ընելիք գիտողութիւն մը կայ՝ այն ո՛չ թէ ուսմանց առաւելագոյնութիւնն է, այլ ընդհանրապէս անբաւականութիւնը: Գրագիտական ուսումներն ո՛չ միայն պէտք չէ բառնալ, այլ և չափանել և ընդհանրացնել: Բառին բուն նշանակութեամբ, չափ քիչ վարժարանաց մէջ կ'աւանդուի գրագիտութիւն: Լոկ քերականութիւն, քերականական վերլուծութիւն և թարգմանութիւն չեն բաւեր: պէտք է ուսուցանել ճանչնալ ու ճաշակել գրագիտական յատկութիւններն ու գեղեցիկն ի գրականութեան: պէտք է ազգային և օտարազգի, հին և նոր մասեցեացութեանց գլուխ-գործոցները վերլուծել ի լուր աշակերտին և վայելել աւանոր Հոմերոս ու Վիրգիլն ու Բագրատունին, Եսթիլն ու Շէքսպիրն ու Պէշիկիշաւան, Պիտագորոսն ու Հիւկոն ու Արիստո, Հերոֆոսն ու Բուզանդը ու Միլէն, Դեմոսթէնն ու Կիկերոնն ու Միլթոն: Գրականութեան ուսումն մարդկային հոգւոյն, մարդկային ընկերութեան և իմաստութեան ուսումն է, և չկայ ուսումն քան զայն բարոյականացուցիչ, քան զայն ընդլայնող մեծցող մարդուն միտքն ու սիրտը: Համարողական ուսմանց քով խօսքն իսկ չընեն բնական գիտութեանց Արեւելի Պատ. Խմբագիրն, մինչ գէթ զայնս առ ոչինչ գրելու չէր իւր իսկ տեսակէտով, վասն զի իւրեանց կիրառութեամբ ա՛յնքան սերտ առնչութիւն ունին գործնական արուեստից հետ: Բայց նոցա ուսումն անհրաժեշտ է նախ և յառաջ մտքին առողջ կրթութեան համար: Նոցա ուսմամբ մանաւանդ միտքը կը խորտակէ նախապաշարմանց չղթայները, ճիշդ ու լուսաւոր գաղափար կ'ստանայ բնութեան երեւութից և զօրութեանց, որպէս և տիեզերական օրինաց հարկաւորութեան վրայ: Բնական գիտութիւնք, ի վեր հանելով տիեզերաց ըստանշելի կազմաւորութիւնը, անհունապէս մեծն ու անհունապէս փոքրը միանգամայն, ո՛չ նուազ կը զօրացնեն կրօնական զգացումն: Անհուն էակին վրայ յաւելլով մեր հիացումն ու պատկառանքը: Կը յիշենք որ ուրիշ առիթներով Արեւելի Խմբագրականաց Պատ. Հեղինակը շեշտած է կրօնական ու բարոյական կրթութեան կարեւորութիւնը: արդ կը զարմանանք որ գէթ այս տեսութեամբ չի խնայեր այն ուսմանց որք համարողութիւն չեն և սակայն մեծ նպաստ կը մատուցանեն կրօնական ու բարոյական զգացմանց մշակութեան, որպէս բնական գիտութիւնք և գրագիտական ուսումնք: Չգիտեմ թէ Պատմութիւն և Աշխարհագրութիւն շնորհ գտած են իւր աշաց առջեւ, եթէ ոչ նոցա մասին ալ կարծելից է ռամկին որ կը հարցնէ թէ անըպարավաճաւը կ'առնու զանոնք:»

Ես կատարեալ նախնական կրթութեամբ մ'ալ չեմ բաւականանար և ամենուն համար կը պահանջեմ միջնակարգ կրթութիւն: Պէտք է որ առատապէս տարածուի լոյսը և իջնէ ժողովրդեան ամէն խաւերուն մէջ: 12-13 տարեկան զարոյցն մեկնող պատանեակ մը չէ կարող ո՛չ բարոյականի և ո՛չ գիտութեան հաստատունն ու գոհացուցիչ սկզբունքներ տանիլ իւր հետ: Պէտք է որ զարոյցի մէջ գտնուի այն հասակին մէջ ուր նկարագիրը կը կազմուի և մարդոց և իրաց վրայ, նիւթական ու բարոյական աշխարհաց վրայ ստանայ լայն ծանօթութիւններ, և իւր միտքը քացու ի իմաստասիրական տեսութեանց, Գէթ

զարոյց թերուսում եւնողներու համար առանձին դասարաններ պարտին լինել՝ կատարելագործող ինչ որ ուրուագծած էր նախակրթութիւնը: Այս պայմանաւ միայն կը բարձրանայ ժողովրդոց իմացական ու բարոյական մակարդակը:

Բայց զարոյցը բոլորովին անտարբէր պարտին լինել նիւթական կեանքի պահանջներուն: — ո՛չ իւր գլխաւոր և առաջին պարտականութեան հետ, որ է մանուկը մարդ ընել կատարեալ, մտքը հասուն և լուսաւոր, ըզգացմամբ ազնիւ՝ համակիր և ընկերական, մարմնով զօրեղ և կոյտառ, կրնայ և պարտի դնել նորա տրամադրութեան տակ միջոցներ որք դիւրացնեն նմա ստալակզի մ'ընարութիւնն: Արդէն իւր ստացած կրթութիւնն, իւր կարողութիւններն զարգացնելով և ազնուացնելով, մի և նոյն ատեն ըրած է զինքն գերազանցապէս օգտակար ու բարեբար ոյժ մը մարդկութեան մէջ, յորմէ անտարակոյս պիտի փութայ օգուտ քաղել ընկերութիւնը և որով ինքն ամէն յարմարութիւն կը վայելէ ինքզինքն շուտով այլոց օգտակար ու պիտանի ընծայելու, արդիւնաւոր կերպով ծառայելու և փայլելու ո՛ր և է ասպարէզի մէջ զոր ուղէ գրկել: այլ նաեւ զարոյցն, այս առանձին տեսակէտով, կ'աւանդէ և պարտի աւանդել՝ ըստ պատշաճի՝ արհեստական, առեւտրական, լեզուական գիտելիք ու կրթութիւնք, մասնաւորապէս ուղղուած դէպ ի գործնական նպատակ: Բայց այս չպարտի խափանել զաստիարակութեան բուն գործը և մեքենայացնել զմարդ՝ թափուր թողնով նորա միտքն ու սիրտը: Ոչ մի վարժարանական տեսչութիւն փոյթ ունեցած է գործադրել մոռուր՝ ու բարոյական կրթութեան ա՛յնքան բազմակողմանի ճոխ ծրագիր որպէս է այն զոր կը գործադրեմ տարիներէ հետէ իմ վարժարանի մէջ: Բայց այս պատճառ մը չէ եղած որ խնամով աւանդել չտամ նաև իմ աշակերտաց ուսումն կենդանի կարեւորագոյն լեզուաց, տոմարակալութեան, վաճառականական թղթակցութեան, օրէնսդատական սկզբանց, առեւտրական իրաւորութեան ու աշխարհագրութեան, այլովքն հանդերձ: Պետական, ուսուցչական, իրաւագիտական, խմբագրական, բժշկական, արուեստական ու վաճառականական ստալակզներու միանգամայն յարմար մեկնած են մեր Ուսումնաւարտը և ցրուած արդարեւ գործունէութեան այս զանազան ընդարձակ դաշտերուն մէջ: Խմբական ու բարոյական խնամեալ կրթութիւնն զոր ընդունած են՝ ո՛չ միայն չէ վնասած աւելի գործնական ճիւղերու ուսման, այլ նա մանաւանդ աւելի դիւրացուցած են զայնս իրենց և աւելի ևս ապահոված իրենց յաջողութիւնը կեանքի մէջ: Եթէ Արեւելի Պատ. Խմբագիրը պատահած է այնպիսի շրջանաւարտներու որք կարող չեն եղած վաճառականի մը համեստ պահանջումները գոհացնել, ո՛չ, յանցանքը գրական կամ այլ ուսմանց չէ, այլ զարոյցաց անկատար ծրագրերուն և անոնց ևս անկատար գործադրութեան:

Գեկ. 12

Ռ. Յ. ՊԵՐՊԵՆԱՆ

Բաղմահմուտ Հայ բժիշկ Պ. Բէստէի աշխարհարաւ Յ հատոր «Կրթութիւն բժշկական առուեսի» անուն գիրքն, որ քսան տարի է ի վեր բոլորովին սպառած էր, Մարգարեան գրատունը կրցած է գտնել միայն 10 օրինակ և կը վաճառէ ի գին 10 ֆռանքի:

ԱԶԳ ԵՒ ՎԱՐՓԱՊԵՏՈՒԹԻՒՆ (1)

Արեւելի մէջ երեւցաւ սոյն խորագրով յօդուած մը որոյ իմաստն կարելի է ամփոփել հետեւեալ կերպով:

1. ՎԱՐՓԱՊԵՏՔ ԱՐԴԻԻՆԱՒՈՐ ՁԵՆ ԻՂԱՅ. 2. ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ՁԵՆ ԳՐԱԽԱՅ ՀԱՆՐՈՒԹԵՆԷՆ:

Եւ իւր գարման այս կացութեան՝ Պ. Յօդուածագիրը կ'առաջարկէ որ:

Ա. Վարժապետութեան ամբողջութիւն մը դուրի օրէնքներու հսկ:

Բ. Վարժապետք քերք մը հիմնեն:

Գ. Գալղութեան Արկղ մը հաստեն:

Պիտի ջանամք՝ աւելի լուսարանութեան համար՝ գիտողութեանց և փորձառութեանց վրայ հիմնուելով, մեր տեսութիւններն ի մէջ բերել վերոյիշեալ խնդրոց մասին: Յատուաւ դատողութիւններ ընել, աջ ու ձախ վճիռներ արձակել՝ չափ դիւրին բան է, կամ թէ, աւելի ճիշդ՝ արդարաւոր՝ մտաց գործ չէ: Երբ մանաւանդ հանրային է խնդիրն, պարտիքը լրջօրէն ուսումնասիրած լինել զայն՝ զանազան գետններու վրայ և տարբեր միջավայրերու մէջ. պարտիքը, երբ կը յայտնեմք մեր կարծիք, չունենալ թաքուն նպատակ, և՛ իրաց վրայ չնայիլ մասնաւոր ուղղութեամբ:

Անկեղծութիւն, բազմակողմանի նկատում և հանրային բարի միակ թեւադիրներ պիտի լինին մեզ, ուրեմն, մեր տեսութեանց համառօտ շրջանին մէջ, Սկսեմք ուրեմն:

1. Վարժապետք արդիւնաւոր չեն եղած: — Ընդհանրապէս, վարժապետք իւրեանց ներքին ոյժերով չափ ու չափ արդիւնաւոր եղած են ի մեզ ամէն տեղ ուր աւելի ունեցած են գործել անխափան: անպատու պայմանաց մէջ իսկ՝ յաճախ տառապելով, մաքառելով ու զոհուելով՝ գործեալ տուած են գնահատելի արդիւնք: Գիւղական վարժապետն իսկ իւր արդեանց մասն ունի այն քաղաքակրթութեան մէջ զոր այսօր ցոյց կուտայ Հայ ժողովուրդը: Մարդ դիւրաւ կը համոզուի այսօր միանգամ քաղաքատեղեան գնէ՝ այս աւուր Հայ փերեզակին, խանութպանին, վաճառականին տոմարներն ու թղթակցութիւններն՝ այն տոմարաց ու թղթակցութեանց հետ զորս ի կիր կ'արկանէին այդ դասակարգի անձինք 30-40 տարի առաջ, Հայ արհեստաւորաց ծանօթութիւնք նոյնպէս աւելի ընդարձակուած ու ճշդուած են, և անշուշտ այս նորագոյն ծանօթութեանց շնորհիւ է որ նոքա լաւագոյն ձեռակերտներ կը յօրինեն: Հայ երկրագործն իսկ այսօր ցոյց կուտայ հետամուտութիւն նորանոր եղանակաց և ջանագիր է գիտական ուղղութիւն մը տալ իւր աշխատութեանց:

Ո՛ւր կազմուեցան ժողովրդեան այդ զանազան դասակարգեր: Միջավայրի ազդեցութիւնը միայն՝ անբաւական պիտի լինէր այդքան զգալի տարբերութիւն գոյացնելու այսքան կարճ միջոցի մէջ. վարժապետին ձեռքը զօրաւոր լծակ մը եղած է այդ արդիւնաւորութեան մէջ:

Եւ միթէ ուրիշ կէտերու մէջ ևս ակներեւ չը՞ տեսնուիր Հայ վարժապետին արդիւնք: Ունենդիր եղիր 70-80 տարեկան Հայու մը և 30-40 տարեկան Հայու մը խօսակցութեանց, կին լինին նոքա թէ՛ այր, գաւառացի կամ

(1) Թէ և կանուխն զրկուած մեզ, տեղեւոր անձկութեան պատճառաւ այս թուով միայն կարելի եղաւ հրատարակել: Ծ. Խմբ.

պօլսեցի : Բաղդատէ՝ 70-80 տարի առաջ տպուած գրքերն այժմու տպուած գրեանց հետ , ուշագիւր եղիւր արդի ընտանեկան կենցաղին ու հանրային կենաց և ի կշիռ դիր զայն՝ 50-60 ամ առաջ առ մեզ տիրած կէս բարբարիկ բարուց հետ : Կոյր , տգէտ , առահի բարեպաշտութիւնն՝ լուսամիտ ռուսքինութիւն կը դառնայ այսօր : Բարեսիրիկ հաստատութիւնք աւելի բազմաթիւ են այժմ առ մեզ քան կէս դար առաջ : Գրեանց սպառումն աւելցած է զգալի կերպիւ :

Դպրոցն չունի՞ միթէ իւր բաժին այս ամէն բարեշրջմանց մէջ . վարժապետին քրտունք չե՞ն արգաստորած :

Եւ որչա՞նի աւելի պիտի լինէր վարժապետին արդիւնաւորութիւն , եթէ կրթութեան սատարք՝ առանց միմեանց հակադրութեան՝ ամենեքին միտէին ի միեւնոյն կէտ : Բայց արդեօք միշտ բարեյաջող պայմանաց մէջ գործած են վարժապետք : Քննեմք :

Կրթութեան սատարներն են վարժապետք , ծնողք անհատապէս , հասարակութիւնն հաւաքապէս և դպրոցական վարչային մարմինք :

Ակնհերե է թէ վարժապետք շատ բան չեն կարող ընել , երբ ծնողք՝ յաճախ իրենց պարտականութեանց անգիտակ , կամ կենաց ինչ ինչ պարագայից բերմամբ և հարկեցուցիչ շարժառիթներու ստիպմամբ՝ կը թերանան իւրեանց պարտականութեանց մէջ զոր ունին առ որդիս :

Վարժապետաց արդիւնաւորութիւն կը նըուստի դարձեալ , երբ շատ տեղ մեր հասարակութիւնք՝ ինքնագործութեան ոգիէ զուրկ՝ մի քանի անձնաւորութեանց ափին մէջ ամփոխուած , ետսիրութեան պատենին մէջ կեկտած , ձայն չեն բառնոր զեղծմանց դէմ , յուզութիւն չեն կոչեր կրթութեան նուիրեալ դարման վառնող կամ խորող ձեռներն , չեն ձաղկեր ու պատժեր՝ գոնէ բարոյապէս՝ այն անձի որք ստորին կրից բռնութենէ մղուած , անխղճարար դպրոցներու դուռ կը փակեն և անմեղ մանկան կը թողուն փողոցները՝ ճիւղ ծուռ , չար օրինակներու հանդիսատես , և կամ , զերեզմանաց տապանաբարբու վրայ իրենց ուսման ծարաւն գոհացնելու հետամուտ : Ծփտան գիւղէն երկու պատանիներ են որ կը խօսին . մտիկ ընե՛մք :

« Մեզ հալիւս կայ գրեւ կարգալու , մենք երկուքս դասընկեր . երբ մեր վարժապետը գնաց գիւղէն , մեր հայրերու կախնեղմն մեր վարժապետը դուռն գոցուեցաւ , մենք էլ երկուքս խելք խելքի տուինք , ամէն օր կ'երթանք դերեզմանոցի մէջ մեր պապերու գրուած խաչաքարեր կարդալով կը վարժուինք . և մեր կալամարի մեղան չորցած է ու բուրբ էլ չկայ որ գրեմք . ասոր համար կտորիկ մը ածուխ կը տանեմք հետերնիս , ձերձմուկ քարի տակ կը փշրեմք սեւ ֆօմիւլն և վրան պուտ մը ջուր լեցնելով , կ'ելնի մեզ համար թանաք , յետոյ կ'առնումք խորօտ փայտի մը կտոր և անով կը գրենք և մէկ կողմէն էլ խաչաքարերը կը կարդամք , որ չմոռնամք արդէն սովորած բաներ , բայց ի՞նչ անեմք շատ տեղեր սխալ կը կարդամք , մէկ չկայ մեզ հետ որ ուղիղ նշանց տայ որ գիտնանք » :

Վարժապետին արդիւնաւորութիւն կը դըժուարանայ , կը յամենայ , երբ Դպրոցական վարչային մարմինք՝ անկարող , դիմակալելու հակադրութեանց զորս շատ անգամ չահամուլութիւնը , բռնի յարգանաց տենջը և կամ վերաւորեալ ամբարտաւանութիւնը կ'ուղղեն

դպրոցի գործոյն դէմ՝ յուսահատ ձեռնթափ կը լինին և տեղի կուտան , թողլով ասպարէզն ապիկարութեան , անձնաւոր ԲԱՍՐ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ , դիպուածին . . . Ո՞ր այսպէս չէ . ե՞րբ այսպէս եղած չէ :

Այսպէ՛ս , ծնողական դատապարտելի անհոգութեան հետ նոցա տնտեսական յոռի կացութիւն , հասարակութեանց անտարբեր վարմանց հետ կրթութիւնն պարտաւորիչ բնող զօրաւոր ձեռաց մը անգոյութիւն , ամբարտաւան հակադրութեանց դէմ դպրոցական վարիչ մարմնոց յաճախակի պարտութիւն . ահա՛ բազմաթիւ պարագայներ որք դրուելով հանգէպ կրթական արգեանց զորս ցարդ կարելի եղած է իրացնել , կ'առաւելուն յարգն այդ արգեանց և արժէքն վարժապետին գործունէութեան :

2. ՎԱՐԺԱՊԵՏՔ ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ ԶԵՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՔ . — Ո՞վ է յանցաւոր : Մեր հասարակութեանց մէջ ա՛յն է համակրելի պաշտօնեայն որ գիտէ օրը գոյն մը փոխել ու քննիլ , որ վարժ է սին ցոյցեր սարքել ու մեծարանել , որ թէ և իւր պաշտօնին մէջ ապիկար՝ բայց իմաստակութեանց մէջ ճարտար է : Իսկ նա՛ որ իւր գործոյն գիտակցութեամբ ու կոչմամբ , իւր արժանապատուութեան պահպանմամբ , ձեռքը խլճին վրայ , կ'աշխատի ըսին , անձնազոհ լինելու չափ յամուռ , բայց որ չունի միմիայն առածիք ողնայար , այնպիսին կը լքուի հանրութենէն , կրելով ահաւոր պատրանք . . . Յաճախ ևս ծայրայեղ արժաթափութիւնն է որ մեր հանրութեանց կամ վարչային մարմնոց համակրել կուտայ աւելի ա՛յս պաշտօնէին քան միւսոյն : Ո՞ւմ է յանցանքը : Պաշտօնէի՛ն , վարժապետի՛ն որ վերջապէս կը քաջուի ասպարէզէն , թէ՛ հասարակութեան կամ վարիչներու որք չեն գնահատեր իրապէս համակրելին և սրոյ համակրութեան ներադր զուգընթաց կը թրթռայ իւրեանց արժաթափութեան ներադրին հետ :

Մնաց որ այսպիսի կոյր ու անձնահաճ համակրութիւն մը արժէք չունի երբէ՛ք . այդպիսի համակրանք լու է որ բնա՛ւ չվայելին վարժապետք . քան զայն լուսադոյն է այժմութեան ու արհամարհանքը , փամանակն , գոնէ , մի օր կը սրբէ զոյնս , և պատմութիւնն , ի փոխարէն , լուսամիտ ու արդար համակրութեամբ կ'ողոյզ վարժապետութեան յիշատակը :

Անցնիմք այժմ ցոյց տուած դարմաններուն : Ա. Պէճէ՛կ որ վարժապետութեան ամբողջութիւն մը դուրի օրէնգներու ակ . — Կարծեմք Պ. Յօդուածագիրն՝ ինչպէս կ'երեւի իւր յաջորդ տողերէն՝ այսու ըսել կ'ուզէ թէ բոլոր վարժապետներն հաստատուել են օրէնք մը և ըստ այնմ վարելու են իրենց պաշտօն :

Բայց վարժապետութիւնն օրէնսդիր իշխանութիւն մը չէ ազգին մէջ , այդ իրաւասութիւն՝ մեր ազգային այժմու կազմակերպութեան մէջ՝ կը վերաբերի Ազգ. երեսփոխանութեան , ենթացիկաբար պահ մը թէ այդ իրաւասութիւնն ունենար , ո՞վ գործադրել պիտի տար իւր դրած օրէնք : Կեդր. վարչութեան Ուսումն. նորհրդոյ հրատարակած կանոնագիրներն , օրէնքներն ու ծրագրերն ի գործադրութեամբ են միթէ : Առանց կարող ձեռաց՝ որ ստիպիչ , պարտաւորիչ ընէ գործադրութիւնն , օրէնքն չի՞նիր միթէ քմահաճոյք մը այս կամ այն անձին ձեռացը մէջ . առանց այդ ձեռաց ամէն ուրեք չպիտի ունենայինք հետողներ :

Իսկ եթէ կրնայ լինիլ վարժապետաց համար ամբողջական կազմակերպութեան եղանակ մը որ՝ առանց կարօտելու այդ կարող ձեռաց՝ ո՛չ միայն յարգելի ու գործադրելի դառնայ հաւասարապէս ամէն տեղ թրքահայոց մէջ , այլ և օգուտ հայթայթէ ի նպաստ վարժապետութեան և ուսանող մանկուոյն , կը փափաքէ ինք ի լոյս ընծայուած տեսնել մի օր այդ կազմակերպութեան եղանակ իւր մանրամասնութեամբ , կամ գոնէ իւր գլխաւոր կէտերով :

Սպասելով հանգերձ այդ բարեբաւոտիկ աւուր , թող ներուր մեզ յայտնել մեր կարծիքն այս մասին :

Ազգային կրթական օրինաց ներկայ պայմանաց մէջ՝ կրթութիւնն պիտի ընթանայ շատ դանդաղ , և վարժապետաց վիճակ պիտի մնայ միշտ աննախանձելի :

Ըստ մեզ , կրթութեան գործոյն մէջ , Ազգ. կեդր. վարչութիւնն կամ կեդրոնացման գրութիւնն օրգեգրելու է , և կամ , բոլորովին մասնաւոր ձեռաց յանձնելու է վարժարանաց վարչութիւնը : Ընդհանրապէս բոլոր մասնաւոր վարժարանաց բարեք յարատեւ ընթացք կը բաւեն հաստատ համոզում մը կազմել ի մասին մեր առաջարկի բանաւորութեան : Գաւառներու մէջ իսկ , մասնաւոր ձեռք կառավարուած վարժարանք եղած են աւելի արդիւնաւոր և նոցա Ուսուցչական մարմինք գտնուած են աւելի դիւրակեցիկ ու աւելի պատուաւոր դրից մէջ :

Բաց աստի , Ազգ. կեդր. իշխանութիւնն պարտաւորիչ հրատարակելու է կրթութիւնն , և յօդուտ ի կիր արկանելու է կառավարութեան իշխանութիւնն թէ՛ տղոց ի վարժարան յաճախելուն և թէ՛ կրթական տրոց գանձման մասին , ինչպէս Յոյնք կ'ընեն :

Բ. Վարժապետք պէ՛տ է քերթ մը հաստատել . — Մանկավարժական թերթի մը օգտակարութիւնն անուրանալի է արդարեւ վարժապետաց համար . և ուրախաւիթ է տեսնել որ ընտրողոյն վարժապետաց խումբ մը արդէն հետամուտ է ստանալ արտօնութիւնն այդպիսի թերթի մը հրատարակման ի կ. Պօլիս . ըստ մեր տեղեկութեանց այդ թերթ պիտի պարունակէ տեսական և գործնական մաս . ի սրտէ յաջողութիւն կը մտալթեմք իւրեանց ջանից :

Դժբաղդարար , սակայն , ինչ որ ցաւալի կայ , սա է թէ , ո՛չ միայն մեր փողովորդ չպիտի հետաքրքրուի այդպիսի թերթով մը — ինչպէս կը յուսայ Պ. Յօդուածագիրն — այլ և դպրոցական վարչային մարմինք իսկ անկարելորդ պիտի համարին բաժանորդագրել այդ թերթին Մատենագրաւաններն այն վարժարանաց որք կը գտնուին իւրեանց ձեռաց տակ . որչա՞նի վարժապետներ կան որք՝ զգացած իւրեանց կոչման վեհութիւն՝ անձկալով կ'անձկան իւրեանց պաշտօնի պահանջած դըրից մէջ դնել զինքեանս , ուսումնասիրութեամբ նորանոր մատենից և ընթերցմամբ մանկավարժական թերթերու . սակայն՝ առ ի չգոյէ միջոցի՝ զուրկ կը մնան . իրենք չեն կարող իւրեանց թոշակի մի մասն յատկացնել դոցա գնման , քանզի արդէն շատ տեղ այդ թոշակ հազիւ կը բաւէ հացի ու պանիրի . դպրոցական մատենագրաւանք , միւս կողմանէ , բազում ուրեք չունին գոյութիւն՝ հայթայթելու համար վարժապետաց այն գրքերն ու թերթեր որոց պէտք կ'զգան նոքա : Հետեւաբար , վարժապետաց սահմանափակ դաս մը միայն կարող պիտի լինի օգտիլ այդ հրա-

ԹՈՒՈՒՑԻԿ ՆՇԱՐՆԵՐ

ԵԱՂԿՈՅ ԹԷ՝ ՄԱՆԿԱՊԱՐՏԷՁ

տարակուսեցին. մեծամասնութիւնը պիտի մնայ անմասն նորա ընծայելիք օգուտներէն: Կրնա՞մք ձրի ծառայել այդ թերթ մինչեւ գիւղական վարժարանաց մէջ. կրնա՞մք, կարող ձեռաց միջոցաւ, ամէն վարժապետի դիւրամտացելի ընել զայն. յայնժամ, այո՛, վարժապետութիւնը վարկ կ'ստանայ շուտով մանկավարժական թերթին ձեռամբ. ինչո՞ւ դադրեցաւ Վարժաւանը. ինչո՞ւ դադրեցաւ Մանկավարժանցը:

Գ. Պէտք է խնայողութեան Արկղ մը հաստատեն վարժապետք. — Խնայողութեան Արկղը գործաւոր դասուց համար, վարժապետաց համար նախախնայութիւն մ'է, այո՛. բայց ըստ մեզ՝ վարժապետաց համար դժուարին գործ է այսպիսի հաստատութիւն կազմաւորել և յիւրակոնութիւն վերածել. քանզի ամէն երկրի մէջ Տէրութիւնն է որ ստանձնած է Խնայողութեան Արկղի հաստատութիւնն ու վարչութիւնը. Տէրութիւնն է որ կուտայ երաշխաւորութիւն աւանդատուներուն:

Եթէ վարժապետը կ'ուզեն ապահովել իրենց ապագայ դիւրակեցութիւն, կարծեմք թէ պէտք չունին միանալու. Խնայողութեան Արկղ հաստատելու համար. կրնան՝ արդէն կազմաւորեալ այդ կարգի հաստատութեանց տարուէ տարի կամ ամսէ ամիս աւանդ տալ իւրեան խնայողութիւններն, և կամ կրնան իւրեանց կեանքն ապահովագրել տալ վստահելի ընկերութեանց՝ mixte պայմանաւ: Ահաւասիկ այս ձեւ ապահովագրութեան մը մանրամասնութիւնը:

« Գ. Ա. . . երեսուն տարեկան է: Կը խոստանայ՝ մինչեւ որ վաթսուց տարեկան լինի՝ Բ. ընկերութեան վճարել տարուէ տարի այսինչ գումարն: Եթէ Գ. Ա. . . մեռնի վաթսուց տարեկան լինելէ առաջ, նոյն իսկ ի հասակի երեսուն ամաց և մի քանի աւուրց, այսինքն մինչեւ իսկ ապահովագրութեան պայմանագրոյն կնքման հետեւեալ օրը, ընկերութիւնը կը հատուցանէ նորա ընտանեաց այսինչ գումարը: Եթէ, ընդհակառակն, Գ. Ա. . . հասնի վաթսուց տարեկան հասակին, յայնժամ եւս կ'ստանայ այն գումարն որ պիտի հատուցուէր իւր ընտանեաց՝ եթէ մեռած լինէր երեսունէ ցվաթսուց տարեկան գտնուած ժամանակամիջոցին մէջ:

Կենաց ապահովագրութեան ամենէ տրամաբանական և ամենէ բարոյական ձեւն է այս՝ համերաշխութեան սկզբան վրայ հիմնուած:

Յաւակնութիւն չունիմք խորհելու թէ մեր այս տեսութիւնը և համոզմունք են ամենէ ուղիղներն և ամենէ գործնականներն: Ուստի կը խնդրեմք մեր մեծարգոյ պաշտօնակիցներէն և ազգային ներհուն հրապարակագիրներէն որ բարեհաճին իւրեանց թուիքն յայտնել ներկայ խնդրոյս նկատմամբ: Ի հարկին սիրով պիտի գրեմք մեք ևս մերովսանն: Յուշապատիւնն ուրեմն:

ՍԵՊՈՒՆՔ

Մէզ, Եախօս խորհուրդ օսմանի. 5 տետրերէ բաղկացեալ տաճկական գեղագրութեան վարժութիւնը՝ Պէրպլիեան վարժարանի շըրջանաւարտներէն Կարապետեան Պետրոս է-ֆէնտիէ յօրինեալ: Ա. և Բ. տետրերն իւրոյն ընծայուած են, և մնացեալը ընդ փոյթ պիտի հրատարակուին: Մէն մի տետր 40 փորա: Կեդրոնատեղին է Ուղտն Չարչը պաշը, թիւ 402, Փորագրիչ Երուստիք էֆ. Փալա-գաշեանի խանութը:

Բաւական ժամանակ կայ որ մեր յայտնի երգիծարան Պարոնեան էֆէնտին նոր բան մը գրած չ'ունի, սակայն իւր քսան տարիէ ի վեր զանազան նիւթոց վրայ գրածներն ղեռ իրենց թարմութիւնն կորսնցուցած չեն և ամէն առթիւ կարելի է զանազան կարգաւ, առանց ձանձրայթ զգալու: Անցեալները տեղական քերթի մը մէջ մանկավարժ Արգոյ Պ. Դաւիթ Բալանթարեանցի Ծաղիկոյ քէ մանկապարտէզ վերնագրով առ Ծաղիկ ուղղեալ Եսալից մի պատասխանը կարգաւոր, իսկոյն յիշեցի Պարոնեան էֆէնտի տարիներ յառաջ ծանուցման տեղ նամակ վերնագրով հրատարակած կարի իմաստալից մի գրութիւնը՝ յորում կը նկարագրէ ազգային նպատակաւոր մը, որ բար աղաչանք և բազմաթիւ զոհողութեամբ թաղեցոյց կողմէ թաղական ընտրուել յաջողել յետոյ, իսկոյն լրագրաց միջոցաւ կը փութայ հրաժարական յղել առ ընտրողս, առարկելով թէ իւր բազմաթիւ զբաղմանց պատճառաւ չը կրնար ընդունիլ այդ փափուկ պաշտօնը, որովհետեւ՝ ինչպէս իւր բազմաթիւ յաճախորդները կը վկայեն՝ իւր Պալլադ փաղարի կեդրոնական նպարտնոցէն ի զատ թաղերու մէջ ևս մասնաճիւղեր բացած լինելով, օրն ի օրն զբաղած է թրիւս-թէյն ուղղակի բեպուած չաքարները, մոմերը, լուցիկները, ևայլն, կարգադրելու, Օտկոյն էկած իւզերը, մաքարները, տալիսները քննելու, Պաքուէն բեպուած քար-իւղները կշռելու, ինչպէս և վաճառատան մէջ ծախուած բազմաթիւ նպարներուն հսկելու, որպէս զի ուրիշներու նման խարդախեալ և պակաս կշիւով ապրանք չ'երթայ իւր Արգոյ յաճախորդաց տունը, և որովհետեւ սկզբունք ընտրած է իրեն աժան ծախել և շատ ծախել, ուստի կը պնդէ իւր հրաժարականին վրայ, ծանուցանելով թէ իւր նպարտնոցէն գնուած ապրանքները մինչեւ յաճախորդին տունը կը զրկէ առանց բեռնակրողէքի: Կ'երեւի թէ Արգոյ Պ. Բալանթարեանցն ալ մեր Արգոյ նպարտաւճառին նման առիթի մը կ'սպասէ եղիւր — այն առիթին որ ներկայանալու մասին շատ ժլատ է — ծանուցման տեղ նամակ մը զրկելով ձրի իւր կենսագրութեան ու անձնաւերի սխրագործութեանց վրամ վէպը հրատարակելու, և ահա Ծաղիկոյ մէջ — զոր ինքը տեղական քերթ մը կ'անուանէ — Ծաղիկոյ քէ մանկապարտէզ յօդուածը տեսնալուն պէս, « հասեալ է ժամ զի փառաւորեցի Արգոյ Բալանթարեանց » ըսելով թեւորը կը սովտէ և կ'սկսի քարոզել թէ, ես եմ արմատ ճշմարիտ մանկավարժութեան, ես էի որ երկար յօդուածներով մանկավարժութիւնը քարոզեցի զառաջինն ի Պօլիս, ես էի մանկավարժութիւն դասախօսողն ի Ղալաթիա, ես էի մանկապարտէզ բացողն ի Տրապիզոն և թէ վերջապէս ես, ես ինքս եմ մանկապարտէզն ի Պրուսա և չիք այլ ոք բաց յինչէն: Մենք տեսնելով այս ես երու հեղեղը, ետ քաշուցանք, որպէս զի մէջը չը խեղդուինք, համոզուելով միանգամայն թէ Գ. Գրիգոր Նիկողոսեան իրաւունք ունի կրցածին չափ պնդելու Հայի Եսին վրայ, սակայն առջը կողմէ մը աւելցնելու տարբերութեամբ: Այո՛, խոստովանիմք և հաւատամք թէ Արգոյ Պ. Բալանթարեանց երկար, շատ երկար յօ-

դուածներ գրած է մանկավարժութեան վրայ, այնչափ երկար ու տաղտկացուցիչ զորս նիւթերու նուագութեան սովէն հրատարակող թերթը նկատելով որ արդէն ցանցառ բաժանորդաց թիւը այդ յաճախապատումներուն պատճառաւ օր ըստ օրէ նուազելու վրայ է, թախանձագին դիմումներով յաջողած է կարճ կտակ տալ ի վիշտ և ի վնաս նպարտաւճառաց: Անուրանալի է թէ Արգոյ Բալանթարեանց արտասանած է բազմաթիւ ճառեր Կեդրոնական վարժարանի սրահին մէջ, և եթէ մենք լսենք, նոտարանները պիտի աղաղակեն թէ « այո՛, այո՛, մեղի դէմ շատ մեծ նախօրութիւններ ըրած է »: սակայն ինչո՞ւ արդեօք ստիպուած է դադարեցնել հանրաշահ գաւերը, իւր ժամանակին պէտք եղած բացառութիւնները արուեստի կարծեմք կարող գրիչներու կողմէ և չեմք յուսար որ մուցուած ըլլան:

Իսկ իւր կենսագրութեան այն մասը զոր առ ի համեստութիւն լուրթեան քօղով կ'սքօղէ Արգոյ Պ. Բալանթարեանց, մենք չենք կըրնար անտես աւանել, այն թէ դո՛ւք, դո՛ւք, Արգոյ Բալանթարեանց, թեկնածու էիք Կեդրոնական վարժարանի տեսչութեան համեստ պաշտօնին և թէ ձեր այնչափ քարոզներն ու յօդուածները մի միայն այդ պաշտօնին շուրջը կը դառնային, և որոյ ի դերս ելնելէն յետոյ միայն յաջողեցաք եռամսեայ պաշտօնաւարութեամբ մը մանկավարժական անջինջ յիշատակներ դրօշմել Սամաթիոյ վարժարանի ուսանողաց սրտին մէջ, որք մինչեւ ցայսօր զրօտանքի ժամանակ դրամ մը ձգելով քարին վրայ, կ'ըսեն իրարու. « Լսո՞ւմ ես, ի՞նչ է այս — ծայն է. — տա՛ ի՞նչի ծայն է — արտա՛մի »: յետոյ զիրար կը կամթթեն. « ցկացուածներդ սրել ես — այո՛. այս ի՞նչ է ուրեմն. — կամթթ է »: և օրն ի օրն Ձեր մանկավարժական պարագմունքներով կ'զրադին, և այս ֆրէպլէան դրութիւն է անշուշտ, և ոչ հին դրութիւն՝ որով մարգուեւ ենք Թրքահայերս: Իսկ Տրապիզոնի Մանկապարտէզին համար դուք ինքնին խօսեցէք, ինչո՞ւ բաց արեցիք և ի՞նչու շուտով փակ արեցիք: Չարամիք ու մանք Ձեր այս երեք տարուան մէջ երեք հարիւր ձեւերու մանկը տեսնելով, լաւ նշանակութիւն չին տար Ձեր զարկացած կուլ-սուրային: սակայն գէթ ես կը հաւատամ որ դուք ըլլա մէք և կ'ուզէք որ հանրութիւնը ամբողջութեամբ օգուտ քաղէ Ձեր ճառագայթներէն: ասոր համար պաշտօնէ պաշտօն, տեղէ տեղ և քաղաքէ քաղաք կը փոխադրուիք: սակայն եղբայրաւոր կ'ըսեմ թէ մինչեւ որ սա եսերը քիչ մը չը զեղչէք և Ձեր մէջ մանանիսի հատի չափ հաւատք չը գոյացնէք թէ Թրքահայոց մէջ ալ այդ բնի գիտցող կայ, կը մարդարէանամ թէ օգտակար չէք կրնար ըլլալ ոչ Ձեր Արգոյ անձին և ոչ ալ ազգին: Ահա տեսնե՛ք Պրուսայի Մանկապարտէզը, շատ լա՛ւ, դո՛ւք բացիք, դուք հաստատեցիք, սակայն եթէ ազգը աղայ չը զրկէ Ձեզ, Ձեր ձեռնարկը չը քաջալերէ, կրնա՞ք շարունակել և դուք ձեզի դասախօսութիւն ընել: — Եթէ այո՛, կեցցէ Ձեր եսը:

Գալով խնդրոյն — սակայն այնչափ երկրորդական հարցերով զրազեցանք որ խնդրոյն վրայ խօսելու ժամանակ չը մնայ և Արգոյ Պ. Բալանթարեանց գուցէ գիտմամբ չեղելով խնդրէն՝ իւր պատմութիւններովը լեցուցած է յօդուածը: ուստի գիտնալու է Արգոյ Արգոյ Պ. Բալանթարեանց որ եթէ Արգոյ յօդուածագիրը բուն խնդրոյն չը պատասխանէր, կը գտնուէր ո՛չ արգոյ յօդուածագիր մը որ զօրմա չը կլլեր և այդպիսի ինքնագովութեան մը պատասխանելու ձանձրոյթն յանձն կ'առնուէ:

ՍՈՄԱՔ

ԹՂԹԱԿ ՅՈՒԹԻՒՆ

ԿԱՐԻՆ, 1/15 դեկտ. 1890. — Յուզիսի ըս-
կիցներն էին, երբ քաղաքիս Առաջնորդ Գեր-
թիւ իւճեան, հիւանդութիւնն դարձանելու
համար փութաց ուղևորել զէպի Կ. Պոլիս:
Գերթիւ իւճեան արդէն հազիւ քանի մը
ամսէ ի վեր կը գտնուէր իւր Առաջնորդական
աթոռին վրայ, և սակայն գալէն ի վեր տը-
կար էր միշտ, իրաւամբ տկար հովիւն էր իւր
խիտ վիճակին: Օր մը գնացի զինքը տեսնե-
լու, փափաքեցայ միանգամայն տեղեկու-
թիւն մ'առնուլ Գերթիւ: Դեռնդ եպիսկոպոսի
(Առաջնորդ Քարբէրէի) մասին, որն որ քա-
ղաքիս Վարչութեան առ Պատրիարքարանն
ըրած խնդրանաց վրայ, Պատր. Փոխանորդ
նշանակուած, և այս հեռագրաւ ծանուցուած
էր: Դեռնդ եպիսկոպոսի վրայ գրեթէ որոշ
տեղեկութիւն ունեցող ո՛չ մի Կարնեցի կար,
մինչ նոյն փափուկ պարագայից մէջ անհրա-
ժեշտ էր զիսնաւ նորա ինչ կարողութեան
տէր՝ եկեղեցական մը լինելն: Իւթիւճեան
Հայրն րուս. « Դեռնդ եպիսկոպոս Շիշման-
եան րեմատաց է, պերճախօս է, լեզուագէտ
է, խելացի և ծանրարարաց մարդ է, և որ
ամենէն աւելին է՝ երկրին տիրող օրինաց հը-
մուտ է »: — « Աղտնք իւր բարեմասնութիւն-
ներն են, ըսի, հապա թերութիւնք »: —
Միակ թերութիւնն է, պատասխանեց, շատ
մոխող լինելը: — « Շատ մոխող, այո է ու-
րեմն իւր թերութիւնը. լա՛ւ, մարդ մը որ
այսչափ բարեմասնութիւններ ունի, անտա-
րակոյս պիտի ունենայ նաև իւր մոխող լինելն
արդարացնող պատճառներ »:

Այս խօսակցութենէ մէկ ու կէս ամիս ետքն
էր որ Շիշմանեան Սրբազան Կարին եկաւ,
իւր վրայ արդէն կազմած լաւ գաղափարս
կրկնապատիկ եղաւ, տեսնելով 45 տարին
անցուկ եպիսկոպոս մը, եռանդուն, աշխա-
տասէր, և որ աւելին է, անկեղծ: Իմ իմ կըր-
նամք իրրեւ Կարնեցի երախտագիրութեամբ
չը յիշէի իւր անձնութիւնն: Այսպիսի Ժա-
մանակի մէջ Կարնոյ Պատրիարքական Փոխա-
նորդութիւնն ստանձնելուն համար:

Գերթիւ Դեռնդ եպիսկոպոս յոյժ կարճ միջոցի
մէջ ճանչցաւ զԿարնեցիս և լաւապէս ճանչ-
ցուեցաւ անոնցմէ, սիրելի դարձաւ նա Կար-
նեցի ժողովրդեան իւր անկեղծութեամբ, օ-
րինասիրութեամբ և անաչառութեամբ. այդ
սուղ ժամանակի մէջ ունեցաւ մեծ գործեր
եւս, զորս առ այժմ՝ զանց կ'առնենք յիշա-
տակել: Բաւականանալով առ այժմ, ազգային
չըջանակին մէջ ունեցած օրինասիրութեանն
իրրեւ սպասցոյց՝ մէկ օրինակ միայն ի մէջ
այլոց յառաջ բերել տատ: Իւր գալէն քիչ մի-
ջոց յետոյ, երեւան եկաւ ամուսնութեան
խնդիր մը: Քաղաքիս բարեկեցիկ դասուն
պատկանող մի է Բէշտի կ'ուզէր, ըստ առաջ-
նոց, իւր չորրորդ ամուսնութիւնն կատա-
րելը կուսի: Դեռնդ եպիսկոպոս ընդդիմա-
ցաւ, և ո՛չ միայն չուզեց արտօնել ընդ կու-
սի, այլ և նախնի եկեղեցական Հարց գծած
օրինաց անհամաձայն լինելն ծանուցանելով,
նուազ զի րութիւնն ցուցուց արտօնել չոր-
րորդ ամուսնութիւն մը ընդ այլոց: Այսու
ամենայնիւ, քաղաքիս հարուստ դասէն ոմանք
— եթէ կարելի է հարուստ ասել — ամէն միջ-
նորդութիւն, ամէն բարեխօսութիւն ըրին
առ Առաջնորդ Սրբազանն, բայց նա անյող-
դող մնաց մինչև վերջ, և միանգամ ընդ միշտ
վերջ տալու համար այդ ծանձրալի դիմում-
ներուն և թախանձանաց, փութաց պարզ

նամակաւ մը խնդիրն էջմիածին յղել (ի չգոյ՛
Պատրիարքարանի), ուրկէ չուշացաւ քալ մեր-
ժողական պատասխան: Այսպէս, Դեռնդ ե-
պիսկոպոս առջին առաւ օրինական մեծ
զեղծման մը, և իւր օրինասիրութեամբ
բարձրացաւ յաջ ժողովրդեան, առ ոտն կո-
խելով ամէն նիւթական ու բարոյական խոս-
տում, մինչ իւր նախորդներէ ոմանք տկարա-
ցան թերեւս... անիրաւ մամոնային առջեւ:

Դեռնդ եպիսկոպոսի կրթական և զանազան
տեսակէտներով Կարնեցւոյն մատուցած իրա-
կան ծառայութեանց յիշատակութիւնն ուրիշ
առթիւ:

Մէկ երկու շաբաթ առաջ պատեհութիւն
ունեցայ կարգալու Սեփանուն աղա Մկրտիչ
Սանասարեանցի կտակն, որ իրաւամբ արժա-
նի կտակ է անմահ Կտակարարին: Սանասար-
եան՝ ամբողջ հարստութիւնն, որոյ քանակը
ծանուցուած չէ կտակին մէջ — զի Մեծ. Կը-
տակատարաց (աղա Կարապետ Եղեանց,
Բժիշկ Լեւոն Տիգրանեանց և Յ. Եւանդու-
եանց) յանձնուած է հաւաքել Հանգուցեղոյն
զանազանաց քով ունեցած պահանջներն և
յետոյ գումարը հրատարակել — նուիրած է
իւրանուն Վարժարանին: Այդ կտակ կը տը-
րափարկէ նաև ունենալ ներքին կանոնադ-
րութիւն մը, որով վարժարանն վարի, ո՛ր
քաղաքին մէջ որ գտնուի, ընդ բարձր հովա-
նաւորութեամբ տեղոյն Առաջնորդին և Հո-
գարարձութեան մը ձեռամբ: Այս վերջինք
պաշտօն պիտի ունենան տարուէ տարի պար-
բերաբար հրատարակել լրագրաց միջոցաւ
Վարժարանին ելից և մօից հաշիւներն, աշա-
կերտաց թիւը, ուսումնական յառաջդիմու-
թիւնն և այլն: Ըստ կամաց Կտակատարին,
աշակերտաց 30ը ձրիավարժ պէտք է լինին:
Պահ մը պիտի ընդհատուի թելը սոյն կտակին,
գարձեալ գտնելու պայմանաւ:

Ինչպէս կը լսեմք, Սանասարեան վարժա-
րանի կիրառութեան յանձնուած ազգային
չէնքին մէջ, գիտութեամբ նախորդ Վար-
չութեան մէկ երկու անգամոց, շինութիւններ
կատարուած են, որպէս զի այժմեան Տեսչու-
թիւնն րնակութեան յատկացնէ զայն: Այս
անգամ ժողովրդեան կողմանէ այս մասին
արտունջք և թող. ինքնորոշ պահանջմունք
Վարչութեան միջոցաւ կ'արգիլեն վարժարա-
նին՝ տան վերածուիլը: Սանասարեան Տես-
չութեան կողմանէ թէև զանազան փորձեր
կը լինին չեղեալ նկատելու ներկայ Վարչու-
թեան այդ մասին ըրած որոշումն, սակայն
Փոխանորդ Սրբազան Հայրն այս առթիւ ևս,
տեսնելով նոյն խի իրենց (Սանասարեանց)
աննպատակ եղող այդ փորձեր, իսպառ ժողո-
վով իսպառ կ'արգիլէ վարժարանը բնակու-
թեան յատկացնել և զայս պաշտօնագրով մը
կը ծանուցանէ տեսչութեան: Այսպէս Սանա-
սարեան Տեսչութիւնն րան մը չը կորսնցնե-
լով, ժողովուրդն ալ հաճութեամբ կը տեսնէ
իւր դժգոհութեան մէկ պատճառին բոլորո-
վին վերնալը:

Գիտի 1891 ՏԱՐԵՆՅ. գրեց Գ. Կ. Փլշտի-
մալեան. 62 երես: Տպագր. Մարգարեան:
Գին 40 փարա: Կեդրոնատեղին է Մերձան
Մարգարեան զրատուն: 1—3

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ Նախապատրաստական
Դասագիրք. Մտաւոր և Գրաւոր. Դ. տպագ-
րութիւն: Աշխատասիրեաց Յ. Գ. Փալա-
դաշեան: — Մանկավարժական նոր և դիւ-
րուսոյց եղանակաւ պատրաստուած և ման-
կական բազմաթիւ պարզ և ընտանի խնդիր-
ներով ձոխացած: Գին 3 զրչ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ Հրեայք եւ Անգլիական միթինկք.
— Լորտ Սալիզպրիի քաղաքականութիւնը. —
Պ. Քրիստիի դժգոհ. — Երկրաչափ Ակադեմի-
կան մը. — Դպրոցական բարեփոխում ի
Դերմանիա:

Լոնտոնի մէջ կազմեալ միթինկները ի
նպատակ Ռուսիոյ Հրեից՝ ամբլութեան դա-
տապարտեալ կը թուին և տեղի կուտան
ուսու մամլոյ այն բացորոշ յայտարարու-
թեան թէ բովանդակ Եւրոպա չպիտի
կարենայ կասեցնել զՌուսիա այն որոշ-
մանց դորժադրութեան մէջ որք սեղմե-
լով հանդերձ Ռուսիոյ Հրեից ընկերային
գործունէութեան շրջանակը, անհրաժեշտ
գատուած են ընդհանուրին օգտին հա-
մար: Եւ յիրաւի զարմանալի կը թուի
Անգլիացւոց ցուցած այս չափազանց հո-
գածութիւնը Ռուսիոյ Հրեից համար,
երբ անկարեւոր կը համարին իրանտաց-
ւոց խնդիրները, (որոց մեծ մասին կեան-
քըն կախումն ունի գետնախնձորի հունձ-
քին առատութեան կամ նուազութեան
աստիճանէն), երբ արտաքին խնդրոց մէջ
Լորտ Սալիզպրիի խեղճականն եղած է այն
աշխարհավարութիւնը որոյ սկզբունքն է
թէ « իրաւունքը զօրաւորինն է »: Այս
քաղաքականութիւնը Լորտ Սալիզպրիի ի
գործ կը դնէ այս պահուս երկու ազգաց
նկատմամբ, Փորթուկալ և Իտալիա, որ ի
վազուց բարեկամ են Անգլիոյ:

Նոր կռիւ մը ծագելով ի հարաւային
Աֆրիկէ, Անգլիացւոց և Փորթուկալացւոց
մէջ, երկու կառավարութիւնք միանգա-
մայն հարկ կը տեսնեն մարտանաւեր յը-
ղել կուռոյն վայրը և այս կերպիւ վերըս-
տին յօդս կը ցնդին հաշտարար կարգադ-
րութեան մը յոյսերը:

Այսպիսի անհաճոյ միջադէպեր չեն
պատահիր բարեբաղդաբար կարմիր ծո-
վու վրայ սահմանակից գտնուող Իտա-
լացւոց և Անգլիացւոց մէջ և սակայն Պ.
Քրիստիի դեռ չէ կարողացած աւետել նոր
խորհրդանի՝ Աֆրիկեան սահմանաց մասին
եղած բանակցութեանց արդիւնքը: Այս
երկու ազգաց Պ. Սալիզպրիի կ'զգացնէ
Մեծին Բրիտանիոյ զօրութիւնը, թէպէտ
տարբեր կերպիւ և չափով:

Իրաւ է թէ Պ. Քրիստիի դորժակա-
տարք չունին Սերիա Փինթա հաղարա-
պետին և այլ Փորթուկալցի պաշտօնա-
տարաց յանդգնութիւնը և չեն անցնիր
երբէք այն կէտը զոր Լորտ Սալիզպրիի իր-
բեւ վերջին սահման նշանակած է Իտա-
լական ազդեցութեան յԱֆրիկէ:

Այս պատճառաւ է թերեւս որ Սալիզ-
պրիի մարքիզը որ այնչափ հրամայական
կերպիւ կը վարուի Լիզպոնի կառավարու-
թեան հանդէպ, աւելի քաղցրութեամբ
կը մերժէ Պ. Քրիստիի պահանջումները:

Պ. Քրիստիի պաշտօնակիցք կը կրին ազ-
դեցութիւն այն հոգեկան վիճակի յորում
պարտի գտնուի Պ. Քրիստիի խառնուած-
քը ունեցող մարդ մը՝ երբ ընդդիմու-
թեան կը հանդիպի Քրիստիի կարենալով
իւր դժգոհութիւնն յայտնել իւր Անգլ-

լիացի բարեկամին իւր տհաճութիւնը կը ցուցնէ նախարարներ փոխելով յաճախ, պաշտօնանկ ընելով Գանձուց պաշտօնեայ մը որ խնայողութիւններ ընել կ'առաջարկէր և նմա յաջորդ կարգելով նախկին նախարար մը որ շուայլ ծախուց պատճառաւ պաշտօնանկ եղած էր... երեսփոխանական ընտրութիւններէն յառաջ:

Ուրիշ նախարարապետ մը Պ. Քրիստիէ աւելի գոհ պարտի լինել այս պահուս, Պ. տը Ֆրէյսինէ որ ֆրանսական Ակադեմիայի անդամ ընտրուած է: Այս առաջին անգամն է կարծեմ որ երկրաչափի մը առջև կը բացուին Բառասուն Անմահից պալատան դռները: Իրաւ է թէ Պ. տը Ֆրէյսինէ սովորական երկրաչափ մը չէ:

Պ. տը Ֆրէյսինէ ոչ միայն առաջնակարգ ճարտարագէտ մ'է, այլ և խոհեմ աշխարհավար, պերճախօս ատենաբան, և կարող վարիչ (administrateur): Երկու տարիէ ի վեր մեծ ճարտարութեամբ կը վարէ պատերազմական գործոց նախարարի ամենակարեւոր և փափուկ պաշտօնը: Այս առթիւ ֆրանսական բանակին մէջ ի գործ դրած հիմնական բարեօրոգումներն են անշուշտ որ ժամանակիս ամէնէն աւելի ժողովրդական պետական մարդը ըրած են զՖրէյսինէ:

Ֆրանսական ժողովուրդը նոյն երախտագիտական ոգւով կամ նոյն ներողամտութեամբ չէ վարուած մի այլ քաղաքագէտի նկատմամբ (Պ. Ժիւլ Ֆէրրի) որ ոչ նուազ կարեւոր ծառայութիւններ մատուցած է իւր երկրին՝ կրթական և գաղութային խնդրոց մէջ: Արդարեւ կրթական հաստատութեանց և ծրագրոց վերակազմութիւնն, պարտաւորիչ և ճրի կրթութեան հաստատումն ի ֆրանսա, Պարսօի դաշնագիրը, Թոնքինի դրաւումը, այս ամէնը Ֆրանսա կը պարտի մեծաւ մասամբ Պ. Ժ. Ֆէրրիի, զոր իւր թշնամիք թօնփիլոսոփ մակննդանած են հեգնութեամբ: Սակայն ֆրանսական զօրաց մասնակի ձախողութիւնն ի Լան-Սօն տապալեց յիշխանութենէ զԺիւլ Ֆէրրի որ վերջին երեսփոխանական ընտրութեան մէջ, մինչեւ իսկ պարզ երեսփոխան ընտրուելու չյաջողեցաւ: Բայց Երախտը կ'ուզէ այժմ դարմանել մասամբ Ժիւլ Ֆէրրիի նման կարող քաղաքագէտի մը եղած անիրաւութիւնը, և յառաջիկայ ծերակուտական ընտրութեանց մէջ Պ. Ժիւլ Ֆէրրիի ընտրութիւնը ապահովեալ կը թուի:

Այս ընտրութիւն մեծ կարեւորութիւն ունի ֆրանսայի և մասնաւորապէս նորընտիր ախպետականին համար, զի Ֆրէյսինէ և Ֆէրրի միշտ իրարու մրցակից եղած և յաճախ իրարու յաջորդած են նախարարապետի պաշտօնին մէջ:

Այս մրցում ապագային մէջ եւս պիտի շարունակի անշուշտ, բայց առ այժմ ֆրանսական նախարարութեան գիրքը հաստատուն կը թուի և ընդգլխադիր կուսակցութեանց կազմալուծումը զայն աւելի կը զօրացնէ, մասնաւոր զի, այն դաշտաբար թէ կառավարութեան տեսա-

կանութիւնը անհրաժեշտ է Հանրապետութեան գոյութեան, որ ըստ օրէ աւելի կը տարածուի ժողովրդեան խաւերուն մէջ:

Գերմանիոյ մէջ կը յուզուի այժմ գաստիարակութեան վերակազմութեան կարեւորագոյն խնդիրը, և երիտասարդ կայսրը իւր վեհապետական պաշտօնին բազմապահանջ դրաւմանց մէջ ժամանակ կը գտնէ, ներկայ լինելու այս առթիւ հաստատեալ մասնագիտաց ժողովոյ նիստերուն և իւր կարծիքներովը ոմանց հիացումը և ամէնուն զարմանքը շարժելու:

Գերմանական մամուլը թէպէտ և կը քննադատէ կայսեր ինչ ինչ կարծիքները, բայց կը գովէ երիտասարդ կայսեր գործունէութիւնը որ հետեւելով մեր Օգոստոս կայսեր Սուլթան Ապտուլ Համիտի օրինին, անձամբ տնօրինել կ'ուզէ ամէն կարեւոր գործ որ իւր հպատակաց նիւթական կամ բարոյական զարգացմանը կրնայ նպաստել: Այսպէս, իւր կայսերական պաշտպանութեամբ հռչակեց Տօք. Քոխի դիւտը (որ ըստ նորագոյն տեղեկութեանց՝ դեռ կատարելագործութեան կը կարօտի): Այսպիսի վեհապետներ իրաւամբ արժանի են ոչ միայն իրենց հպատակաց այլ և բովանդակ աշխարհի երախտագիտութեան:

Գ. Զ.

14 դեկտ. 1890

ԿՈՎԿԱՍԵՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի ամենօրեայ Նոր-Դար լրագրոյն մէջ կը կարգաւք հետեւեալները:

— Ուրվագիտել Կովկասի պ. կառավարչապետը տեղեկութիւններ է ստացել, թէ շատ օտարերկրացիներ, գլխաւորապէս թուրքահրապառակներից, վերջերս Կովկաս են գալիս առանց տնցադրեր ունենալու և մեծ մասամբ ազատ կերպով ապրում են քաղաքներում, ուստի նա առաջարկել է նահանգապետներին՝ ոտսիկանութիւններին պարտաւորեցնել այդ տեղեկութիւնները ստուգելու և յիշեալ անձերին ստիպելու, որ շուտով ներկայացնեն իրենց անցագրերը, իսկ մինչ անցագրերն ստանալը նրանց երկրի հիւպատոսներից խմանալ, թէ նրանք ձմարիտ է որ այն երկրից են, որտեղից նրանք համարում են իրենց: Հակառակ դէպքում այնպիսի անձերին օրինական ճանապարհով արտասահման ուղարկել:

— Նոյեմբերի 17-ի շաբաթ գիշերը գիշերապահները քաղաքիս բոլոր կասկածելի տեղերում ընդհանուր խուզարկութիւն կատարելով, անցագիր և պարագմունք չունեցող 206 հոգի են ձերբակալել, որոնցից մինը կին է: Դրանցից նրանք, որոնք օտարաքաղաքացի են, կ'ուղարկուեն իրենց ծննդավայրը:

— Մի ամիս առաջ Նուխու գաւառի Կոդալու գիւղում մի կատաղած գայլ կրծել էր Նասիձէ անունով մի վրացու, որ 20 օր շարունակ բժշկուում էր Թիֆլիսի մանրակենսաբանական կայարանում Պատեօրի մեթոդով: Այժմ տեղական թերթերը հաղորդում են, որ նա նոյեմբերի 15-ին՝ բոլորովին առողջացած՝ գնաց իրենց գիւղը: Բայց ուշադրութեան արժանի այն է, որ բայց Նասիձէից, կատաղած գայլը կծել է Անդրոնիկով կոչուած

մի իշխանի, որը տանը մնալով բժշկուելիս է եղել տանու հեքիմներից մինի մոտ, և նա էլ այս օրերս բոլորովին առողջացել է:

— Սարիզամիշէն կը գրեն:

Այս տարի Ռուսիա գաղթող Մշեցիները մեզ մօտ մեծ բազմութեամբ են հիւր գալիս: Երեւի խեղճերը նոր են հասկացել իրենց անտէր մնացած տան ու տեղի և երեսի վրայ ընկած կնոջ ու որդու նշանակութիւնը: Ես հետաքրքրուեցի և մի բաւական հասակն առած Մշեցուց սկսեցի հարց ու փորձ անել: — Սարգիս, — հարցրի ես, — քանի՞ տարի է որ օտարութեան մէջ ես: Պատասխանում է. « Էսա՛ ութ տարի է, աղա՛, ութ տարի, որ թողել եմ զիմ տուն տեղ, կնիկն ու ճպեր, գացեր Թիֆլիս կ'աշխատեմ »: — Տուն հէջ փող ուղարկե՞լ ես: « Եւա՛ւ, աղա՛, մեզքս ինչ պահեմ, չկրցայ, մի քանի ոսկի աշխատայ, էն էլ էրկու ամիս խիւանդ պարկայ, միսովաւ յմէն քոռ ու փուշ եղաւ: Տուն կ'երթամ, համա սիրտս ի կտրած »: Երեւակայեցէք, ութ տարի է որ թողել է իւր տունը տեղը, իւր կինն ու զաւակները և օտարութեան մէջ տանջուել է: Այժմ կտրած սրտով, գատարկ գրպանով, այս բաւական չէ, այլ և վարակուած ու իւր հայրենիքի սովորութիւններից խորթացած տուն է գնում: Ի՞նչ աչքով պէտք է նայէ նա իւր կնոջը, իւր զաւակներին, մինչդեռ նա ութ տարի է, որ Թիֆլիսում է ապրել: Նրա աչքում այժմ ամեն բան խորթ կը թուայ և չկարծեմ որ նա իւր ոտքը ծալէ, իւր հայրենիքից դուրս չգայ, իւր կնոջ, իւր զաւակների նեղութիւններն հոգայ՝ վերջապէս նրանցից որին որ տեսնու, յիշողութիւնդ ամեն ինչ այսպէս կ'ապակեցնէ քո աչքի առաջ, որ նա տուն կ'երթայ, բայց վարակուած, գատարկ գրպանով:

— Թիֆլիսում վախճանուել է զրամատէր Ստեփաննոս Յարութիւնեան Տէր-Ստեփանեանը: Հանգուցեալը կենդանութեան ժամանակ ազգային ոչ մի գործի չէր մտնում և այդ բանի համար մի որ և է կոպէկ նուիրատուութիւն տալը իրեն համար անհասկանալի և օտար բան էր համարում: Ահա այս մարդը նօտարական կարգով իւր բաւականին մեծաքանակ կարողութիւնը, որ 100—200 հազար բուրլու չափ կը լինի թէ փողով և թէ անշարժ կայքով, կտակել է ներսիսեան հոգեւոր դպրանոցին: Իւր մօրը, քրոջը և կնոջը հանգուցեալը կտակով իրաւունք է տուել իւր եկամուտների մի որոշ մասը սաանալու միայն քանի կենդանի են:

Հանգուցեալը անգլաակ էր. նրա կտակի մասին թէպէտեւ աւելի մանրամասն տեղեկութիւններ ունինք, բայց ստուգելուց յետոյ միայն կը հրատարակենք:

— Սպահանի և Հիւլիստանի վիճակի վրայ ձեռնադրուած նորապսակ Եսայի եպիսկոպոս Աստուածատրեանը հինգ շաբթի, նոյեմ. 15-ին գիշերուայ գնացքով Բագու ուղևորուեցաւ, Ռաշտի վրայով իւր նոր պաշտօնատեղին հասնելու համար:

Եսայի Սրբազանը բաւականին տարիներ Մանչեստրի հայ գաղթականութեան հոգեւոր հովուի պաշտօնը վարելով, ծանօթ է անգլիական բարք ու վարքին և խօսում է անգլիերէն, մի հանգամանք՝ որ Հիւլիստանի նոր առաջնորդին կ'օգնէ կալկաթայի եկեղեցական ու ազգային կառուածները և մեծաքանակ կտակները կորուստից ազատելու գործին: « Նոր-Դար »-ը քանիցս այդ մասին խօսել է և հրաւիրել է ընդհանուր ուշադրութե-

Թիւնը կալկաթայում կուլ գնացող և անհետացող եկեղեցական-ազգային ահագին կալուածներին և փողերին վրայ :

Տեսնենք թէ այսուհետեւ ինչ կը լինի, քանի որ մեր եկեղեցին փողի պէտք ունի, իսկ ահագին գումարներ Հնդկաստանում կորչում են, կորչում են միայն նրա համար, որ նրանց տէրութիւն անող չկայ :

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Ռ Ի Թ Ի Ի Ն

Տէր Խմբագիր, հինգ տարիէ ի վեր զիս տանջող ստամոքսային հիւանդութիւնս 50 է աւելի բժիշկը դարձաւ եւ անկարող գըտնուած լինելով, սկսած էի այլ ևս անբուժելի նկատել հիւանդութիւնս և յուսահատուիլ, երբ առթիւ մը յ'սկզբէ (ուր այժմ 40 ի չափ ազգայինը կը գտնուին) ուղևորելով, բազմապէս ծանօթանալու տեղւոյն թաղապետութեան հայազգի դեղագործ Մեծ. Թադէոս էֆ. Անանեանի հետ, որ ճարտար խնամիք դարձանելով զիս, լիովին բուժեց անբուժելի կարծեցեալ օխտս : Թո՛ղ տուք ինձ, Տէր Խմբագիր, այս անձնուէր ծառայութեան փոխարէն շնորհակալեաց զգացումներս յայտնել հրապարակաւ առ նորին Ազնուութիւն, թէ՛ երախտագիտական պարտք մը կատարած լինելու և թէ՛ հրաւիրելու համար այս հիւանդութեամբ տառապողներն որ դիմեն առ Անանեան էֆ. որուն գործնական կարողութեանն գոհ պիտի մնան :

21 Նոյեմբ. 1890 Մնամ յարգանք
Սեւանի Տեկին Սթեփանի Զպօ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ըստ խնդրանայ Նիւ-Եորքի Հայ դաշ-թականութեան, եպիսկոպոսական եկեղեցւոյ եպիսկոպոսապետ Հայր Փաթըր՝ տեղւոյն Ս. Յովնան Ոսկերեան եկեղեցւոյն քովի մատուռը կիւրակէ աւուրց համար Հայոց տրամադրութեան ներքեւ գրեր է : Ամերիկայի Հայոց հոգևոր Հովիւ Արթ. Յովսէփ Ծ. Վ. Սարաճեան, Ուսթըրէն Նիւ-Եորք երթալով, նոյեմբեր 30ի կիւրակէ օրն հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցեր և օծեր է սոյն նորակազմ եկեղեցւոյն սպասները և խաչանիշ շարժական վէճ մը, ի ներկայութեան զանազան տեղերէ հաւաքուած 250է աւելի ազգայնոց և մի քանի օտարականաց :

— Կրօն. Ժողովն Օրթոդոքս եկեղեցւոյն աւագերէց անուանեց զԱրթ. Տ. Սահակ աւագ քահանայ Տ. Սարգսեան՝ իբր յաջորդ հանգուցեալ Տ. Իգնատիոս աւագ քահանայ Մանավեանի :

— Հայ Հռովմականաց Պատրիարք Գերապայծառ Ազարեան Սրբազան, ընկերակցութեամբ Պատր. Փոխանորդ Գեր. Արսլանեան Կարապետ եպիսկոպոսի, Պատրիարքարանի գործակաւար Աշճեան վարդապետի և Տոբթ. Նուրիճան էֆէնտիի, երկուշաբթի օր Ազգ. Պատրիարքարան դալով, երեք քառորդ ժամու չափ տեսակցեալ Աշըգեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր հետ, և շնորհաւորելով Ն. Ամենապատուութեան վերադարձն յ'Աթոռ Պատրիարքութեան Հայոց Թուրքիոյ, կար և կարողութիւն մաղթեց :

— Խառն Ժողովն իւր վերջին նստին մէջ Բաղէլի առաջնորդական տեղապահ կարգած է Տէրունեան Արթ. Մաղաքիա վարդապետը :

— Տնտես. Խորհրդոյ Ատենապետ Մեծ. Միհրան էֆ. Սէթեան հրաժարեր է իւր պաշտօնէն՝ անձնական զբաղմանց պատճառաւ :

— Սրանցով լրագրոյ Կարնոյ Թղթակիցը « Տեսութիւն մը Կարնոյ Հայոց եպիսկոպոսին հետ » խորագրոյն ներքեւ հետեւեալը կը գրէ դեկտ. 7 թուականաւ (Ն. Տ.) :

« Երկար և շահեկան տեսակցութիւն մը ունեցայ Կարնոյ Հայոց պատրիարքական փոխանորդ Գեր. Ղեոնդ եպիսկոպոս Շիշմանեանի հետ, որ յայտնեց ինձ թէ, նահանգիս վարչական խորհրդոյ միւս անդամոց հետ ըստորագրած է Մալաթիա մը ի պատասխանի այն անհիմն տմրաստանութեանց և այն զըրպարտութեանց՝ զորս Տէլի Նիւզ հրատարակած էր Վսեմ. կուսակալ Հասան Խայրի փաշայի դէմ : Յիշեալ անդիական լրագիրը կը պնդէ թէ Գիւրտերն այստեղ կոչուած են որպէս զի պատրաստ դռնուին, ի պահանջել հարկին, Հայոց վրայ յարձակելու, և կ'ամբաստանէ յիշեալ կուսակալը թէ Ալաշկերտի գայմազամ անուանած է Ահմէտ անուն անձ մը, որ իւր սպաննութեամբ, բռնարարութեամբ ու հրձիգութեամբ հռչակաւոր եղող ընտանիքէ մի սերած է :

« Նահանգիս ժողովրդեան ներկայացուցչաց Մաղաթիան բացորոշապէս կը հերքէ այդ զրպարտութիւնները և յստակօրէն կը հաստատէ թէ քիւրտ ցեղապետը այստեղ կոչուած են, ինչպէս արդէն գրեցի ձեզ, որպէս զի հաստատ երախտաւորութիւնք առնուին անոնցմէ թէ, իրենց հնազանդող ցեղերը չպիտի ձեւնարկեն ո՛ր և է բանի որ կրնայ խանգարել այս գաւառաց մէջ բարեբաղդարար տիրող հանդարտութիւնը : Յետոյ, Մաղաթիան կը հաստատէ թէ կարելի չէ ո՛ր և է մեղադրելի արարք գտնել Ահմէտ պէյի վրայ որ ամէն ժամանակ յարգանք տածած է առ կայս. կառավարութիւնն, և առ օրէնս : Իւր ընտանիքը միշտ անձնուրիշութեան հաւատովք տրւած է կայս. կառավարութեան, և կարելի չէ ո՛ր և է յանցանք վերագրել իրեն : Եթէ մինչև իսկ իւր ընտանեաց անդամներէն ոմանք յանցանքներ գործած են, բան մը զոր կարելի է ենթադրել առանց ընդունելու, անոնց պատասխանատուութիւնը չը կրնար ծանրանալ Ահմէտ պէյի վրայ : Իւր հայրն ու եղբայրքը, որք կ'ամբաստանուին, վաղուց մեռած են :

« Գեր. Ղեոնդ եպիսկոպոս իւր և իւր հօտին երախտագիտութիւնն յայտնեց ինձ—արտօնելով զիս հրապարակաւ ծանուցանել զայն— առ կուսակալն Հասան Խայրի փաշա՝ այն բարեյօժարութեան, արդարակրօն մը տաց և հայրական ընթացից համար որով կը կառավարէ նահանգս, որ անոր կը պարտի խաղաղութեան վերահաստատումը : Ն. Գերապատուութիւն կը գտնէ յանձին այդ պետական պաշտօնատարին մասնաւոր յատկութիւնը որք նշանաւոր վարչագէտ մը կը հանդիսացնեն զինքը :

« Որովհետեւ այստեղ կը գտնուիմ ժողովրդեան կարծիքն ուսումնասիրելու և պատմելու համար, ինձ պարտք համարեցի բառ առ բառ հաղորդել ձեզ տեղւոյս Հայոց հոգեւոր պետին կողմէ ինձ ըստածները : »

— Տիփրիկցի Պրագոս և Սերաստացի Ներսէս անուն անձինք, որք յեղափոխական մասնախմբին իրրեւ անդամ ամբաստանուած և ամբաստանիչ տեսնին կողմանէ ոճրագործ ճանչցուած են, ի մօտոյ պիտի դատուին Եղեռնադատ Ատենին առջև :

— Յեղափոխական մասնախմբին իրրեւ նա, խաղաղ ամբաստանեալ ուսուսչայ Յակոբ Վարդ-Պատրիքոֆի և ընկերաց դատն, որ երկուշաբթի օր տեղի պիտի ունենար, այս աւուր յետաձգուեցաւ՝ Ռուսիոյ դեսպանատան թարգմանին բացակայութեան պատճառաւ :

Կ'ըսուի թէ Վարդ-Պատրիքոֆի փոխանորդութիւնն ստանձնած է փաստաբան Թընկըր Սիմոն էֆէնտի, իսկ ընկերաց փոխանորդութիւնն ստանձնած են Թօգաթեան Գասպար, Պապեան Պետրոս, Սիմոնեան խնդիր և Գալայճեան Գրիգոր էֆէնտիք :

— Ամբաստանիչ տեսնին իրրեւ ոճրագործ ամբաստանած է Վարդան, Յովհաննէս, Կարապետ, Վարդան, Պաղտատար, Պետրոս, Վարդան, Յարութիւն, Անտոն, Հովանոցավաճառ Սարգիս, ամխավաճառ Սարգիս և Թորոս անուն անձերն, որք ձերբակալուած են իրրեւ անդամ յեղափոխական մասնախմբին :

— Ստացանք « Արեւելեան Մամուլ » ամսագրոյ նոյեմբերի թիւը՝ ամէն անգամու նման ճօն և ընտիր պարունակութեամբ : Կ'արժէ որ ամէն գրասէր Հայ ստանայ և ընթերցու մեր տաղանդաւոր և բազմաճուտ հրապարակագիր Ազնուաշուք Մամուրեան Մատթէոս էֆէնտիի պատուական ամսագիրն : Տարեկան բաժանորդագիրն է չորս արծաթ մէճիտ : Դիւրութեան համար կարելի է դիմել նաև « Ծաղիկ » ի Տնօրէնութեան :

ԱԶԴ

Առաջնորդարանին Հայոց Կարնոյ

Բնիկ Մշեցի և յերկար ամաց հետէ Խնուս գաւառի Աղճամելիք գիւղ ընկող Աղճոյեան Հլօ անուն անձն բաւական տարիներէ ի վեր իւր կիներն ու զաւակները անխնամ թողնելով կ'պանդխտի ի Կ. Պոլիս, ուր կ'ըսուի իսկ թէ կնքած է իւր մահկանացուն : Յիշեալն կը ընկի եղեր Բերա, Վերան խան, իւր հօրեղբոր Մշեցի Հաճի Յակոբ անուն անձին մօտ և արձարարութեամբ կ'զրադի եղեր : Արդ, կը խնդրուի Մայրաքաղաքի բոլոր Բարեշնորհ Քահանայներէն և Պատ. Թաղ. Խորհրդոց Մեծ. Անդամներէն որ եթէ երբէք այգպիսի մէկը կ'ձանչնան և անոր կենդանի կամ մեռած լինելուն վրայով ու է տեղեկութիւն ունին, բարեհաճին անպատճառ և ընդ փոյթ իմացնել մեզ ի կարեւոր տնօրինութիւն :

Պատ. Փոխանորդ Կարնոյ
Ղեկնար. ԵՊՍ. ՇԵՄԱՆԵԱՆ
Կարին 1 դեկտ. 1890

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հանքաց օրէնքի 13րդ յօդուածին վրայ հետեւեալ յաւելումն եղած է և վաւերացած է կայս. Իրաւէով.

Կայս. կառավարութեան և օտար կառավարութեանց պաշտօնեայք, ո՛ր կարգին ալ վերաբերին, չեն կրնար իրենց պաշտօնի շրջանակին մէջ գտնուած տեղերու մէջ հանքի մենաշնորհ ստանալ : Այս արգելք կը վերաբերի նաեւ անոնց, որք պաշտօնի մը վրայ գտնուելով հանդերձ արտօնեալ են զբաղել արհեստով և առեւտրով :

25 բէպի իւլ ախըր 308
26 նոյեմբեր 306

— Պրուսայէն կը գրեն թէ մետաքսի գինն որ մինչեւ երկու ոսկի 45 զըշ. ի իջած էր, սկսած է բարձրանալ: Խոզակին գինը թէեւ կայուն վիճակի մէջ է, սակայն կը յուսացուի թէ բարձրանայ գործարաններու կողմէ գընուելով: Պրուսայի նահանգին արտածութիւնը զգալի առաւելութիւն մը կրած են: Այս օրերս երկու Ֆրանսական շոգենաւեր Մուտանիայէն ապրանք առած են: Նաւահանգստին մէջ այժմ կը գտնուին բազմաթիւ առաքատանաւեր, որք ապրանք կ'առնուն:

— Դատական նախարարութեան հրամանաւ Սերաստիոյ վերաքննիչ ատենին ընդհանուր դատախազ Հաֆըզ Հասան էֆէնտի Գարբերդ Գնացեր է նահանգին դատական գործերը քննելու համար:

— Կայս. հրամանաւ՝ քաղաքապետ Բըտվան պէյի ամաթոշակը 15.000 զրուշէն 20 հազար զրուշի բարձրացած է:

— Կայս. չորրորդ զօրաբանակի հեծելազօրաց հրամանատար Իպրահիմ փաշա անցեալ չարթու Երզնկայէն Կարին ուղևորեր է:

— Լոնտոնի մէջ կազմեալ անգլ. դրամատեսարց ընկերութիւն մը առաջարկներ ըրեր է Օսմ. կառավարութեան՝ Իզմիրի քարափանց գնման համար, այնպիսի նպատակաւ որ պայմաններով որք կը գերազանցեն Պ. Կոստէի նախագիտ առաջարկած պայմանները:

— Պ. Լէոնիտան Պալթաճի, արտոնութիւն խնդրած է չահակցական անանուն ընկերութիւն մը կազմել Թուրքիոյ ջուրերուն մէջ շոգենաւեր բանեցնելու համար: Կ'ըսուի թէ Պ. Պալթաճի առաջարկած է որ այդ ընկերութիւնը կազմուելէ յետոյ օտար նաւեր արգելուին Թուրքիոյ մէկ նաւահանգիստէն միւսըն ուղևոր ու ապրանք փոխադրելէ: Ընկերութեան գրամագլուխն, չորս միլիոն անգլիական ոսկի, պիտի գոյանայ ի հրապարակ հանուելիք արժէթուղթերով: Ընկերութեան մենաշնորհի պայմանագրով պիտի լինի յիսուն տարի:

— Անցեալ երեքշաբթի գիշեր (Դեկտ. 4) Զմիւռնիոյ Գուշ Ատասը անուն տեղը պատահած երկրաշարժէն 80 տուններ ամբողջովին և 500 տուններ մասամբ փլած են: Մարդու կորուստ պատահած չէ: Ուրլայի, Չէշմէի, Թիրէի, Այսընի, Մէնէմէնի և Մէվլաթէյի մէջ ալ թէեւ երկրաշարժի ցնցումներ զգացուած են, սակայն որ և է վնաս պատահած չէ:

Այսրնի կուսակալին նախագահութեամբ յանձնաժողով մը կազմուած է Գուշ Ատայի վնասելոց նպատակելու համար: Կ'ըսուի թէ 6-7.000 ոսկեոյ պէտք մը կայ փլած ու վնասուած տուններու վերաշինութեան համար, որուն տեղացիք մեծ մասամբ անկարող կը գտնուին:

— Իտալիոյ երկրագործական նախարարութեան որոշմամբ առեւտրական մթերանոցներ պիտի հաստատուին Իզմիրի, Ալվալըքի և Պըրուսայի մէջ՝ խաղական արտադրութեանց համար: Այդ տուններ տեղեկութիւն պիտի քաղեն Անատոլիոյ վաճառականութեան վրայ և տեղւոյն վրայ ուղղակի իրենք պիտի գնեն տեղական արտադրութիւններն ու յանձն պիտի առնուն փոխանակել զայնս իտալական այն ապրանքաց հետ որք գիւրաւ կը վաճառին, ինչպէս թալի, ծծումբ, աշտանակներ, լուցկի, բամպակէ հիւսուածք, պարաններ և երկրագործական գործիներ:

— Կայս. բժշկական ընկերութիւնն, իւր անցեալ ուրբաթ առուր նստին մէջ լսեց Պէյրլինէն դարձող երկու բժշկաց՝ Տոքթ. Զար-

դարեանի և Տոքթ. Ֆրիէտի տեսութիւնները, — թէ և այդ երկու բժիշկը անդամ չեն բժշկական ընկերութեան: Տոք. Զարդարեան յոյժ չահական տեղեկագիր մը կարգաց ի մասին հիւժախտի դարմանման նորահնար դեղին, իսկ Տոք. Ֆրիէտ ժողովոյն մէջ բացաւ կնքեալ շիշ մը Գոյսեան դեղին, որ Կ. Պոլիս զրկուած առաջին նմոյշն է:

Վսեմ. Տոք. Խորասանճեան էֆէնտի Վեհ. Սուլթանին ուղղած է իւր ընդհանուր տեղեկագիրն որ կը պարունակէ բժշկական պատուիրակութեան կարծիքն ու տեսութիւնները Գոյսեան գիւտին վրայ:

Սալիսէի ատիճան տրուեցաւ Հանրային Պարտուց Վարչութեան Հալէպի ճիւղին Ա. Գարաուզար Յովհաննէս էֆէնտի:

— Մենաշնորհ խնդրուած է Թրամպէյի գիծ մը շինելու Պրուսայի Սէթ Պաշը ըսուած տեղին միջև Զէքիրիէ:

— Պրուսայի Առեւտր. սենեակն սկսաւ հրատարակել Սէնայի անուն թրքերէն լրագիր մ'որ իւր առաջին թուոյն մէջ կարգ մը տեղեկութիւններ կը հրատարակէ՝ նահանգին մէջ մատաքսագործութեան և այլ արհեստից զարգացման համար ձեռք առնուած միջոցներուն վրայ: Ըստ այս լրագրոյ, Պրուսայի նահանգին մէջ 1300 գործարանք կան զանազան արհեստից յատուկ և 65 մետաքսի գործարանք: Այս վերջինք տարին 2000 հազ. մետաքս կը յղեն յԱւստրալիա, իւրաքանչիւր հազ. 78 ական օխտ:

— Ագրիանուպոլսոյ կուսակալը կը բանակցի Հանրագումար շինութեանց նախարարութեան հետ՝ Մարիցա և Արտա գետերուն երկու կողմի թուրքեր շինելու և այսպէս ողողումներն արգելելու համար:

— Երզնկայի Ակն ու Կիւմիւշխանէ տանող ճամբայներուն վրայ կառուցեալ 17 կամրջոց 12 ին շինութիւնք աւարտած են և անցուդարձն սկսած:

— Մանիսայէն Իզմիր տանող կառուցելոյն շինութեան համար ազգու անօրինութիւնք եղած են Սարուսանի նոր կառավարիչ Քեամիլ պէյի կողմանէ, որուն ուղղորդութեան առարկայ եղած է նաև կրթական գործը:

— Ալվալըք գիւղաքաղաքին մէջ Առեւտր. սենեակ մը հաստատուեր է:

— Յառաջիկայ եւմական 1307 տարին սկսեալ մայրաքաղաքիս կառուածական տուրքը հնչուն դրամով պիտի գանձուի:

— Մենաշնորհ խնդրուած է երկաթուղի մը շինել Սելանիկէն մինչև հելլենական սահմանագլուխը՝ Քաթէրի այի ճամբով, երկաթուղի մ'ալ Խօսօսիոյի և Տէտէ աղաճի միջև: Այս վերջին գիծ պիտի անցնի Մալկարայէն:

— Միջերկրականի գերմանական նաւատորմին հրամանատար գեր-ծովակալ Շրէտէր անցեալ շաբաթ օր Միսիրի ուղևորեցաւ:

— Երէկի թուրք լրագիրք հրատարակած են Վանայ, Նիքսարի ու Գարասիի Հայոց կողմէ ի կայս. պալատ ուղղեալ հեռագրեր, զորս ստորագրողը յայտարարելէ յետոյ թէ Հայ հասարակութեան ղառարկաշնորհ անձանց ոմանց կողմէ ի գործ դնել ուղղուած ինչ ինչ ապօրինաւորութիւնք մեծ ցաւ պատճառած են իրենց, այս առթիւ իրենց հաւատարմական զգացումները կը յայտնեն և բարեմաղթութիւններ կ'ընեն վստի կենաց և բարօրութեան վեհ. Սուլթանին:

Վանայ հեռագիրը կը կրէ 146 ստորագրութիւններ, Նիքսարինը՝ 8 և Գարասինը՝ 21: Այս վերջինոյն մէջ կայ տեղւոյն առաջնորդ Գեր. Տիմոթէոս եպիսկոպոսի ստորագրութիւնը:

Կայս. Պալատան առաջին քարտուղարը ծանուցած է ի Վան, ի Նիքսար և ի Գարասի, հաղորդել այդ հեռագիրն ստորագրողներուն թէ, հեռագիրները վեհ. Սուլթանին մատուցուած են և թէ ն. վեհափառութիւն իւր բարձր գորունակութիւնը յայտնած է:

— Բ. Դրնէն Յունաց պատրիարքարան զըրկուած պաշտօնագրոյն պատասխանը չորեքշաբթի օր մատուցուեցաւ Արդարութեան գործոց նախարարութեան: Միւս կողմանէ, նոյն խնդրոյ մասին ուրիշ յիշատակագիր մ'ալ կայս. պալատ մատուցուեցաւ երեք մետրապոլիտներու կողմանէ:

— Էրթուղլուի նաւաբեկեալները բերող ճաւոնական շոգենաւը այսօր մայրաքաղաքս կ'սպասուի:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Ազգային Ժողովն երէկ ի նիստ գումարեցաւ Ազգեան Ամեն. Ս. Պատրիարք Հօր հետեալ հրաւիրագրով.

«Տէ՛ր.

«Մեր Օգոստոսփառ Կայսեր ներկայութեանը հրաւիրուելու պատիւն ունենալով, Նորին Կայսերական Վեհափառութեան ինչ ինչ հայրական բարձր հրամանները Ազգային Ժողովոյ հաղորդելու համար կը հրաւիրեմ Վազգային Երեսփոխանս որ յառաջիկայ Ուրբաթ 14 դեկտեմբեր, ի ժամ 7, ներկայ գտնուին ի Խորհրդարանն Ղալաթիոյ:

11 դեկտ. 1890 Մենաք աղօթարար
ԿՆԻՔ Ս. ՊԱՏՐԻԱՐԿ ՀՈՐ

Ատեանը բացուեցաւ ի ներկայութեան 47 երեսփոխանաց, առժամեայ ատենապետութեամբ Վսեմ. Սարգիս էֆէնտի Ալարէկեանի: Սովորական մաղթանքէն յետոյ, Ազգեան Ամեն. Ս. Պատրիարք Հայրն գրաւոր բանախօսութիւն մ'արտասանելով, բացատրեց վերահաստատութեան պատճառներն, և յայտնեց Վեհ. Սուլթանի բարձր հրամաններն առ համարէն Ազգն Հայոց, Ժողովականք ծափահարեցին քանիցս և Կեցցէ Վեհ. Սուլթանն աղաղակեցին:

Ատենադպիր Մէլիքեան էֆ. Ժողովոյն ներկայեց քանի մը երեսփոխանաց առաջարկութեան մի գիրն, որով խորին երախտագիրութիւն կը յայտնէին առ Վեհ. Սուլթանն՝ Ս. Պատրիարքին և ազգային վարչական ժողովոյ վերահաստատութեան համար: Ներկայք միահամուռ ձայնակցեցան սոյն առաջարկին:

Ըստ առաջարկութեան Պէրպէրեան էֆէնտի, թաղային ընտրական ցուցակը պատրաստուելով՝ պակասեալ երեսփոխանաց տեղ նոր ընտրութիւնք պիտի կատարուին, միւս կողմանէ ժողովն անխափան պիտի շարունակէ իւր նիստերը: Յաջորդ նիստը պիտի գումարի Ս. Ծննդեան տօնէն յետոյ, օրակարգի առաջին խնդիր ունենալով Ա. Ատենապետի ընտրութիւնը:

ԱՐՏՈՇԱՏԻՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ

Մէճիտիյէ	108 12	Արժ. Յէթ. (6 հատ)	82 20
Մէթալիք	99 17	Դաւալ ԲՈՂ	90 20
Պէշիք, Եւթլըք	102 16	Նիքսար	87 18
Քառորդ մէճիտ	406 20	Գիւմիշ	51 15
Մանր մէճիտ	401 40	Արդ. Լիւս	440 20
Գումարը 7 90			

Գոնտիլիէ (Երեկոյ.)	20 2	Բում. Երկ. բաժին	76 1/2
Նոր փոխ. 4 0/0		Թաղայի (մոնր)	43 30
(Թահլիլաթը Օսմ.)	78 35	Թաղայի (մեծ)	42 35

ԱՐՏՈՇԱՏԻՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՄԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ
Էսկի զապիյէ հասցէի, քիւ 61